ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2021-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓԱԳԻՐԸ

Ք. ԵՐԵՎԱՆ

01.08.2025 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է ամփոփ և համապարփակ տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Փաստաբանների պալատ) կողմից 2021-2025 թվականներին (այսուհետ նաև՝ հաշվետու ժամանակահատված) իրականացված աշխատանքների և գրանցած արդյունքների վերաբերյալ:

I. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

❖ ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ.

1. «Փաստաբանության մասին» օրենքի նախագծի խնդրահարույց դրույթների ընդունման դեմ պայքարը.

2022 թվականի ընթացքում փաստաբանական համայնքը կանգնել է լուրջ մարտահրավերի առջև:

Նույն թվականի մարտի 24-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում (www.e-draft.am) քննարկման է դրվել ««Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Նախագծում առկա են եղել մի շարք խնդրահարույց կետեր, որոնց ընդունումը կարող էր խարխլել փաստաբանների պալատի ողջ ինքնավարությունը, միասնականությունն ու անկախությունը: Այս վտանգավոր հետևանքները կանխելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը տևական քննարկումների և կատարված ծավալուն աշխատանքի արդյունքում ներկայացրել է խնդրահարույց կետերի վերաբերյալ փաստաբանական համայնքի միասնական և վճռական դիրքորոշումը:

««Փաստաբանության մասին» օրենքի փոփոխությունների նախագծից խնդրահարույց կետերը բացառելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատի կողմից կազմակերպվել են մի շարք քննարկումներ ՀՀ արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչների և նշված օրենքի նախագիծը մշակող փորձագետների մասնակցությամբ:

Տեղի է ունեցել երկօրյա արտագնա հանդիպում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը, արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչները, փաստաբանները:

Կատարված մեծածավալ աշխատանքների և գործադրված ջանքերի շնորհիվ հաջողվել է հասնել նպաստավոր արդյունքի և կանխարգելել այն վտանգների և բացասական հետևանքների առաջացումը, որոնցով լի էր նախագծի ընդունումը:

Արդյունքում փոփոխության է ենթարկվել նախագիծը և հանվել են հետևյալ դրույթները.

1. Փաստաբանների պալատի կառուցվածքում ստեղծվող

կարգապահական հանձնաժողովի անհատական կազմում Արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավումը, կարգապահական հանձնաժողովին վարույթ հարուցելու և գործը նախապատրաստելու լիազորության վերապահումը:

2. Փաստաբանների պալատի կառուցվածքի վերահսկողական հանձնաժողովների ձևավորումը և դրանց անհատական կազմում Արդարադատության և Ֆինանսների նախարարությունների ներկայացուցիչների ներգրավումը, վերահսկողական հանձնաժողովին Փաստաբանների պալատի ֆինանսատնտեսական գործունեության, ինչպես նաև հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման և հաշվետվողականության ապահովման միջամտության լիազորության վերապահումը:

3. Պալատի (բացառությամբ նախագահի և խորհրդի անդամների), ինչպես նաև դպրոցի մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց համար քաղաքական զսպվածություն դրսևորելու պարտականությունը:

2. «**Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին**» ***օրենքի նախագծի խնդրահարույց դրույթների ընդունման դեմ պայքարը.***

Կատարվել են մեծածավալ աշխատանքներ նշված օրենքի փոփոխության վերաբերյալ օրինագծի ընդունումը կանխելու և խնդրահարույց դրույթները բացառելու ուղղությամբ: Նշված օրինագծով սահմանափակվում էին փաստաբանների իրավունքները՝ նախատեսվում էր էականորեն նվազեցնել փաստաբանների տեղեկատվություն ստանալու լիազորությունները:

Պալատի ներկայացուցիչների գործուն ջանքերի, այդ թվում՝ միջազգային կառույցների ներգրավման արդյունքում, հաջողվել է հանել խնդրահարույց դրույթները:

3. «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի խնդրահարույց դրույթների ընդունման դեմ պայքարը.

Հաշվետու ժամանակահատվածում փաստաբանական համայնքը կանգնել է նոր մարտահրավերի առջև: Ողջ տարվա ընթացքում համայնքի պայքարը հիմնականում ուղղված է եղել պետական մարմինների նոր հարկային քաղաքականության դեմ:

2024 թվականի տարեսկզբին շրջանառության մեջ է դրվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ): Նախագծով սահմանվում էր փաստաբանական ծառայությունների մատուցումը տեղափոխել ընդհանուր հարկային դաշտ, այսինքն՝ շրջանառության հարկի փոխարեն, փաստաբանական ծառայությունների մատուցման համար նախատեսվում էր գանձել 18% (անհատ ձեռնարկատերերի համար՝ 23%) շահութահարկ և 20% ավելացված արժեքի հարկ:

Բացի այդ, Նախագծով նախատեսվում էր հարկել նաև անվճար իրավաբանական օգնությունը: Նախագծի շրջանառության մեջ դրվելու պահից ակնհայտ էր, որ դրա ընդունումը խարխլելու է փաստաբանության իրավապաշտպան առաքելության հիմքերը: Հաշվի առնելով ասվածը և մյուս բոլոր բացասական հետևանքները, որոնք անխուսափելիորեն պետք է առաջանային Նախագծի ընդունման արդյունքում, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, նշված նախագծի ընդունումը կանխելու, ինչպես նաև դրա ընդունումից հետո օրենքի սահմանադրականությունը վիճակելու ուղղությամբ ամենօրյա ռեժիմով իրականացրել է բազմաձավալ աշխատանքներ:

Մասնավորապես՝

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախաձեռնությամբ 2024 թվականի հունվարի 30-ին և մայիսի 16-ին իրականացվել են Ակումբի նիստեր, որոնց շրջանակներում քննարկվել են Նախագծի խնդրահարույց կետերը, դրա ընդունման բացասական հետևանքները, փաստաբանական համայնքի անելիքները՝ Նախագծի ընդունումը կանխելու ուղղությամբ: Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում կատարվել են ամփոփիչ հրապարակումներ:

Միաժամանակ իրականացվել է նաև բողոքի ակցիա, որի շրջանակներում փաստաբանները մեկ օր հրաժարվել են Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն, ներկայացուցչություն իրականացնելուց:

Պալատը Նախագծի վերաբերյալ ծավալուն հակափաստարկներ է ներկայացրել Ազգային ժողովի նախագահին, Վարչապետի աշխատակազմին, ՀՀ ֆինանսների նախարարությանը, Արդարադատության նախարարությանը: Պալատը դիմել է նաև Մարդու իրավունքների պաշտպանին:

Հարցի շուրջ Պալատի նախագահի միջնորդությամբ քննարկում է կազմակերպվել Ազգային Ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում, որին մասնակցել են նաև Պալատի ներկայացուցիչները:

Օրենքի երկրորդ ընթերցումից առաջ քննարկում է կազմակերպվել նաև Ազգային Ժողովի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից, որին ևս Պալատի ներկայացուցիչները մասնակցել են, ներկայացրել նախագծի անընդունելիության հիմնավորումները:

- **Նշված հարցով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը դիմել է միջազգային գործընկերներին, մասնավորապես՝**

- Եվրոպայի Խորհրդի Կոռուպցիայի դեմ պետությունների խմբին (GRECO) և դրա մոնիտորինգային խմբին,
- Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովին,
- Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարին,

- Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեին,
- Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին (CCBE):

Բացի այդ, ՀՀ փաստաբանների պալատը Փարիզի փաստաբանների պալատի հետ համատեղ զեկույց է ներկայացվել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեային:

2025 թվականի փետրվարին հարցի առնչությամբ անց են կացվել լսումներ:

Նախագծի ընդունման բացասական հետևանքների մասին Փաստաբանների պալատը բազմիցս բարձրաձայնել է տարբեր լրատվության միջոցներով, իրականացրել է մամուլի ասուլիսներ:

<u>Նախագծի, որպես օրենք ընդունումից հետո՝</u> 2024 թվականի հունիսի 14-ին, տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի նիստ, որի ընթացքում որոշում է կայացվել դիմել Հայաստանի Հանրապետության Նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, Ազգային Ժողովի պատգամավորներին՝ «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու նպատակով՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար:

2024 թվականի հունիսի 17-ին Փաստաբանների պալատը դիմել է Հայաստանի Հանրապետության նախագահին՝ նշված օրենքը չստորագրելու և Սահմանադրության դրույթներին դրա համապատասխանությունը վիճարկելու նպատակով՝ Սահմանադրական դատարան դիմելու խնդրանքով:

2024 թվականի հուլիսի 07-ին ՀՀ փաստաբանների պալատը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին՝ ներկայացնելով կարծիք «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-285-Ն ՀՀ օրենքի Սահմանադրությանն առերևույթ հակասելու, և Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելու վերաբերյալ:

2024 թվականի հոկտեմբերի 30-ին, այս հարցով տեղի է ունեցել Ակումբի հերթական նիստը, որի շրջանակներում կայացված որոշման մասին կրկին կատարվել է հրապարակում Փաստաբանների պալատի պաշտոնական կայքում:

2024 թվականի նոյեմբերի 20-ին, Ազգային ժողովում խորհրդարանական լսումների ժամանակ Փաստաբանների պալատի ներկայացուցիչները բարձր ամբիոնից ներկայացրել են Օրենքի խնդրահարույց դրույթների և ապագայում դրանց կիրառման բացասական հետևանքները: Նշվածով պայմանավորված՝ Օրենքի վերաբերյալ նույն ամբիոնից բացասական կարծիքներ են հայտնել նաև մի շարք պատգամավորներ:

Այս պայքարի շրջանակներում՝ նոյեմբերի 26-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել հերթական մամուլի ասուլիսը որտեղ նախաձեռնող խմբի փաստաբանները ներկայացրել են ՀՀ ֆինանսների նախարարի՝ առերևույթ

կոռուպցիոն ռիսկեր պարունակող գործողությունները: Ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:

Դեկտեմբերի 10-ին Փաստաբանների պալատի ներկայացուցիչն այս և փաստաբանության համար կարևոր մի շարք այլ հարցերի վերաբերյալ ելույթ է ունեցել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի ընթացքում:

2025 թվականի հունվարի 7-ին տեղի է ունեցել փաստաբանների Ակումբի նիստ, որի ընթացքում քննարկվել է հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի առաջացրած խնդիրները:

Փաստաբանների ակումբի նիստի քննարկման արդյունքներով որոշվել է շարունակել անհրաժեշտ գործողությունների իրականացումը հարկային խնդրահարույց կարգավորումների դեմ:

2025 թվականի փետրվարի 3-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել ևս մեկ Ակումբի նիստ: Փաստաբանները հերթական անգամ քննարկել են 2025 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի առաջացրած խնդիրները:

Փաստաբանների ակումբի նիստի քննարկման արդյունքներով որոշվել է՝ 2025 թվականի փետրվարի 10-ին բողոքի ակցիա իրականացնել՝ հրաժարվել Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց՝ պահանջելով ՀՀ կառավարությունից օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալ և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը ՀՀ ազգային ժողով ուղարկելու միջոցով՝ փաստաբանական գործունեություն համարվող ծառայությունների մատուցումը, անվճար (անհատույց) և կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը ազատել ավելացված արժեքի հարկից:

2025 թվականի փետրվարի 10-ին Փաստաբանների պալատում տեղի է ունեցել Ընդհանուր ժողով, որի արդյունքում «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.06.2024 թվականին ընդունված թիվ ՀՕ-285-Ն օրենքի՝ փաստաբանությանը առնչվող խնդրահարույց կարգավորումները դատապարտող հայտարարության է ընդունվել:

Պալատը դիմել է Ազգային Ժողովի պատգամավորներին Օրենքի սահմանադրականությունը վիճարկելու համար ՀՀ սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու վերաբերյալ: 2025 թվականին ընդդիմադիր պատգամավորները դիմել են Սահմանադրական դատարան: Նույն թվականի փետրվարի 21-ին դիմումն ընդունվել է վարույթ, արդյունքում կայացվել է վարույթը կարճելու մասին որոշում:

Այս ողջ ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի պաշտպանի փաստաբանական համայնքը իրավապաշտպան գործունեության դեմ պետության կողմից վարվող կործանարար քաղաքականությունից և դրա հետևանքներից:

❖ ՊԱԼԱՏԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ.

«Փաստաբանության մասին» օրենքի փոփոխության արդյունքում կատարվել են մի շարք փոփոխություններ ՀՀ փաստաբանների պալատի ներքին իրավական ակտերում:

2022 թվականի դեկտեմբերի 24-ին հրավիրվել է ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողով: Ժողովի արդյունքներով ընտրվել են ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի անդամները, հաստատվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններն ու լրացումները:

ՀՀ փաստաբանների պալատի խարհուրդը հաստատել է ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի գործունեության կարգը: Ընդունվել է «Կարգապահական գործով փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» թիվ 34-Լ որոշումը, փոփոխվել, լրացվել և վերախմբագրվել են ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 11.02.2020թ. թիվ 4/11-Լ որոշման հավելվածը, 13.01.2023թ. թիվ 2/5-Լ որոշումը և դրա հավելվածը:

Փոփոխություններ են կատարվել մի շարք այլ ներքին իրավական ակտերում, որոնց հնարավոր է ծանոթանալ այցելելով ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջ:

2022 թվականին և 2024 թվականին տեղի են ունեցել ՀՀ փաստաբանների պալատի մարզային համակարգողների ընտրություններ: Տեղի ունեցած ընտրությունների արդյունքներով մարզային համակարգողներ են ընտրվել Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արարատի, Տավուշի, Արմավիրի, Կոտայքի և Արագածոտնի մարզերում:

2025 թվականի փետրվարի 10-ին անց են կացվել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամների ընտրությունները:

Փաստաբանների պալատի միասնականությունն ապահովելու և փաստաբանների խնդիրներին ծանոթանալու նպատակով Պալատի ներկայացուցիչները այցեր են իրականացրել ՀՀ տարբեր մարզեր և հանդիպումներ են ունեցել տեղի փաստաբանների հետ:

Հարկ է նշել, որ չնայած Փաստաբանների պալատի աշխատանքների ծավալի մեծացմանը, Պալատի աշխատակիցների քանակն ավելացել է միայն չորսով՝ ի շնորհիվ աշխատանքների ներքին կազմակերպման արդյունավետության

շարունակական բարձրացման: Նշվածը, բնականաբար նպաստել է ֆինանսական ռեսուրսների խնայմանը[1]:

❖ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՐՑԱԽԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻՆ.

Արցախի փաստաբանների պալատին աջակցելու նպատակով ՀՀ ՓՊ պատվիրակությունը այցելել է Արցախ, որի շրջանակներում արցախցի գործընկերներին տրամադրվել է ֆինանսական և նյութական աջակցություն:

ՀՀ փաստաբանների պալատը և ՀՀ փաստաբանական ակադեմիան 2023 թվականի ցավալի իրադարձություններից հետո, փաստաբանական գործունեություն ծավալող տեղահանված արցախցի հայրենակիցներին օժանդակել

[1] *2022 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ Փաստաբանների պալատում աշխատել է 24 անձ, իսկ 2023 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ՝ 28 անձ: Մինչ օրս աշխատակիցների քանակը չի փոփոխվել:*

են աշխատանքի, աշխատանքային պայմանների, նյութատեխնիկական միջոցների ապահովման, ինչպես նաև կացարաններ որոնելու հարցում:

Տարածվել է հայտարարություն արցախցի փաստաբաններին աշխատանքի տեղավորելու հարցում փաստաբանական գրասենյակների աջակցությունը ստանալու նպատակով: Հայտարարությանն արձագանքել է 20-ից ավելի փաստաբանական գրասենյակներ, որոնք իրենց պատրաստակամություն են արտահայտել արցախցի փաստաբաններին ընդունել աշխատանքի:

Նույն թվականի հոկտեմբերի 02-ին ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում, որի շրջանակներում քննարկվել են արցախցի փաստաբաններին աշխատանքով ապահովելու հետ կապված հարցերը: Փաստաբանների պալատը և Փաստաբանական ակադեմիան աշխատանքային պայմաններով ապահովել են Արցախի փաստաբանների պալատի նախագահին, Արցախի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին և Փաստաբանական դպրոցի տնօրենին: Մյուս փաստաբաններին տրամադրվել է օժանդակություն՝ աշխատասեղաններ և նյութատեխնիկական միջոցներ ապահովելու եղանակով: Փաստաբանների պալատում ստեղծված աշխատանքային խումբը՝ ֆինանսական տնօրենի գլխավորությամբ օժանդակել է արցախցի փաստաբաններին կացարաններ որոնելու հարցերում:

Ացախցի փաստաբանների համար կազմակերպվել է 200 ակադեմիական ժամ վերապատրաստման դասընթաց:

ՀՀ փաստաբանական պալատի հետ համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի գործընկեր փաստաբանական միավորումները շոշափելի ֆինանսական և նյութական աջակցություն են ցուցաբերել արցախցի գործընկերներին:

II. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԳԱՂՏՆԱԼՍՄԱՆ) ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների իրավունքներն ու մասնագիտական գործունեությունը բոլոր տեսակի (հատկապես՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների) սպառնալիքներից, խոչընդոտներից և ցանկացած տեսակի այլ հակաիրավական միջամտությունից (ոտնձգությունից) պաշտպանելու

համար շարունակել է իր ակտիվ գործունեությունն իրականացնել Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի գործունեության արդյունավետության առանցքում է հանձնաժողովի աշխատանքների հանրայնացումը՝ փաստաբանների իրավունքների իրականացման խոչընդոտների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը, տարածումը և քննարկումների կազմակերպումը: Առանձին դեպքերում հանձնաժողովը քննարկելով փաստաբանների ներկայացրած տեղեկություններն իրենց մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու փորձերի վերաբերյալ՝ դիմել է իրավասու մարմիններին այդ դեպքերը քննարկման առարկա դարձնելու միջնորդություններով:

Փաստաբանների պալատում Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովից բացի՝ շարունակել է գործել նաև արագ արձագանքման հանձնախումբը, որի նպատակն է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերի, փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունների արձանագրումը, ինչպես նաև փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն նպաստելը: Արագ արձագանքման հանձնախումբը իր գործիքակազմում հաճախակի օգտվում է տարբեր պետական մարմինների ձևավորված կապի խողովակներից, որոնք արդյունավետ միջոց են խնդիրների օպերատիվ լուծման հարցում: Ըստ անհրաժեշտության՝ տեղում խնդրահարույց իրավիճակները արձանագրելու համար հանձնախումբ կատարում նաև այցեր: Այդ արձանագրումները հետագայում ոչ միայն օգտագործվում են փաստաբանների կողմից իրենց և իրենց վստահորդների իրավունքների խախտումների փաստերը հիմնավորելու համար, այլև համապատասխան հարթակներում բարձրաձայնվում են իրավասու մարմինների պատասխանատու պաշտոնատար անձանց առջև:

❖ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՁԵՌՆԱՐԿԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

- 2022 թվականին տեղի ունեցած փաստաբանի ձերբակալման, այնուհետև նրա նկատմամբ քրեական հետապնդման հարուցման և կալանավորման մասին:
- Քննարկելով նշված հարցը Հանձնաժողովն արտահայտել է դիրքորոշում առ այն, որ փաստաբանը չի կարող ենթարկվել որևէ հետապնդման իր մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար, ինչպես նաև այն, որ

փաստաբանի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելը, լինի դա վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնել, թե՝ կալանավորում, պետք է լինի ծայրահեղ միջոց: Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը նշվել է, որ փաստաբանի նկատմամբ հարկադրանքի միջոց կիրառելու հարցը քննարկելիս պետք է ուշադրության կենտրոնում ունենալ նաև նրա վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերը: Մասնավորապես, փաստաբանի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրվելու դեպքում նրա վստահորդների՝ իր նախընտրած փաստաբանի միջոցով իր իրավունքները պաշտպանելու հնարավորությունից զրկվելու հանգամանքը:

- Կանխելու համար փաստաբանի բջջային հեռախոսի թվային խուզարկությունը և փաստաբանական գաղտնիքի ոտնահարումը Պալատի նախագահը Գլխավոր դատախազին ուղղել է գրություն, որում խստագույնս դատապարտել է վարույթն իրականացնող մարմնի գործելակերպը և ընդգծել է, որ փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ցանկացած ոտնձգություն (փորձ) բացարձակապես անընդունելի է: Պալատն արձանագրել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չունի փաստաբանական գաղտնիքի երաշխիքների պահպանմամբ իրականացնելու փաստաբանի հեռախոսի պարունակությունը բացահայտող դատավարական գործողություն, ուստի այդպիսի ցանկացած գործողություն հղի է փաստաբանական գաղտնիքի պաշտպանության իրավական երաշխիքների խախտման վտանգով:
- Նշվել է, որ փաստաբանական գաղտնիքի մեջ ներառվում է նաև փաստաբանի և նրա վստահորդի ցանկացած հաղորդակցություն, տեղեկատվության փոխանակում: Գործնականում դա կատարվում է նաև հեռահաղորդակցության միջոցներով, ինչպիսին է հեռախոսը, և ողջամտորեն փաստաբանի հեռախոսը պարունակում է այդպիսի տվյալներ: Փաստաբանի հեռախոսը բացառություն չի կազմում:
- Վարույթն իրականացնող մարմինը ձեռնպահ է մնացել այդ գործողությունների իրականացումից:
- Փաստաբանական գաղտնիքի բացահայտման վտանգի, փաստաբանի անկախության և օրինական մասնագիտական գործունեության շրջանակներում գործողությունների ազատության, փաստաբանի՝ որպես մասնագիտության հեղինակության և կոնկրետ փաստաբանի վստահորդների իրավունքների պաշտպանության հարցերի համատեքստում, ՀՀ փաստաբանների պալատը քննարկել է միջազգային գործընկերների հետ, մասնավորապես՝ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) հարթակում:
- Քննարկման արդյունքում՝ 2022 թվականի նոյեմբերի 15-ին, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE), որի դիտորդ անդամ է Հայաստանը, ուսումնասիրելով առկա տեղեկատվությունը, դիմել է Հայաստանի Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանին՝ հայտնելով իր մտահոգությունը փաստաբանի ձերբակալության կապակցությամբ և

հորդորել նպաստել վերջինիս ազատության վերականգնմանը:

- Մեկ այլ գործով ՀՀ փաստաբանների պալատ է դիմել ՀՀ փաստաբանների պալատի անդամ փաստաբան, ով խնդրել էր աջակցություն մեկ այլ փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման առնչությամբ, որի հետ կապված իրականացնում է վերջինիս պաշտպանությունը: Փաստաբանի պնդմամբ մեղադրանքը հիմնված էր բացառապես այն հանգամանքի վրա, որ մինչ իր վստահորդին տեսակցելը վերջինիս խուզարկությամբ արգելված իրեր չեն հայտնաբերվել, մինչդեռ տեսակցությունից հետո հայտնաբերվել են թմրամիջոցներ:
- Փաստաբանի ներկայացրած հանգամանքները քննարկվել են Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նիստի շրջանակներում՝ նկատի ունենալով, որ ենթադրյալ արարքը կապված էր փաստաբանական գործունեության հետ: Դիմումին զուգահեռ, փաստաբանի կողմից ներկայացվել են նաև քրեական գործի նյութերը, որոնք ևս ուսումնասիրվել են:
- Հանձնաժողովը խնդրահարույց է համարել ապացուցման այնպիսի ցածր մակարդակը, երբ փաստաբանի նկատմամբ քրեական հետապնդում կարող է իրականացվել, առավել ևս նախաքննության ավարտով քրեաիրավական գնահատական տրվել նրա կողմից իր վստահորդին արգելված իր փոխանցելու վերաբերյալ միայն այն փաստերի հիման վրա, որ տեսակցությունից առաջ վստահորդի մոտ խուզարկությամբ դրանք չեն հայտնաբերվել, բայց տեսակցությունից հետո հայտնաբերվել են:
- Հանձնաժողովը, մտահոգված լինելով նմանատիպ պրակտիկայի առկայության կամ ձևավորման առնչությամբ, խնդրել է ՀՀ գլխավոր դատախազության անմիջական հսկողությունը նշված հարցի առնչությամբ՝ ակնկալելով ՀՀ գլխավոր դատախազության միջամտությունը նմանատիպ դեպքերը բացառելու և այդ առումով հավելյալ երաշխիքներ ապահովելու ուղղությամբ:
- 2023 թվականի սեպտեմբերի 28-ին ձերբակալվել է մեկ այլ փաստաբան: Պարզվել է, որ վերջինիս նկատմամբ իրականացվող քրեական հետապնդումը չի առնչվում նրա մասնագիտական գործունեությանը:
- Կալանավորվելուց անմիջապես հետո՝ 2023 թվականի սեպտեմբերի 29-ին, Փաստաբանների պալատի նախագահն այցելել է քրեակատարողական հիմնարկ, հանդիպել փաստաբանի հետ: Պալատը շարունակել է ուշադրությամբ հետևել փաստաբանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման հետ կապված վարույթին:
- 2024 թվականի դեկտեմբերի 18-ին հայտնի է դարձել, որ ձերբակալվել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ հանդիսացող Փաստաբան: Այդ մասին տեղեկանալուն պես, Պալատի նախագահ Սիմոն Բաբայանը կապ է հաստատել վերջինիս շահերի պաշտպանությունն իրականացնող փաստաբանների հետ,

քննարկել դեպքի հանգամանքները, հայտնել Պալատի պատրաստակամությունը անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու հարցում: Ընդգծվել է հետագա զարգացումները ուշադրության կենտրոնում պահելու կարևորությունը:

❖ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ.

- ՀՀ փաստաբանների պալատ է մուտքագրվել փաստաբանի կողմից ներկայացված դիմումն այն մասին, որ քրեական գործի դատական քննության ընթացքում՝ ամբաստանյալի շահերի պաշտպանության առնչությամբ տուժող կողմն իր և իր որդու հասցեին **հնչեցրել է սպանության սպառնալիքներ**: Այնուհետև նրանցից մեկը դատարանի շենքի բակում հայհոյել և փորձել է հարձակվել իր վրա: Հարձակումը կանխվել է կողմնակի անձանց միջամտությամբ:
- Փաստաբանների պալատը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազին, որով իր մտահոգությունն է արտահայտել փաստաբանի նկատմամբ իր մասնագիտական գործունեության առնչությամբ հնչեցված սպառնալիքների և բռնություն կիրառելու փորձի վերաբերյալ: Ամբողջացնելով դիրքորոշումը Հանձնաժողովն ընդգծել է, որ արձանագրված դեպքի հետ կապված ակնակալում է, որ ձեռնարկվեն միջոցներ փաստաբանի պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ:
- Արձագանքելով Ոստիկանության բաժիններ, նախաքննական մարմիններ տարատեսակ պատճառաբանություններով փաստաբանների մուտքը խոչընդոտելու դեպքերին՝ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը խստորեն դատապարտել է փաստաբանի մասնագիտական գործունեությունը որևէ եղանակով խոչընդոտելու դրսևորումները:
- Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հրատապ կարգով քննարկել է քրեական վարույթին որոշ փաստաբանների ներգրավմանը խոչընդոտելու հարցը և հանդես է եկել հայտարարությամբ, որով իր մտահոգությունն է հայտնել փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու վերաբերյալ շարունակվող հաղորդումների առնչությամբ, հիշեցնելով, որ այդպիսի գործելակերպն ուղղակիորեն վտանգում է անձանց սահմանադրությամբ երաշխավորված հիմնարար իրավունքները և ազատությունները, իսկ իրավասու մարմիններին հորդորել է խստորեն հետևել օրենսդրական պահանջներին, հիշեցնելով, որ փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելն առաջացնում է քրեական պատասխանատվություն:
- Փաստաբանի ահազանգով պալատի ներկայացուցիչները ներկայացել են փաստաբանական գրասենյակ և կանխել են քննիչի կողմից փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավումը:

- Արձագանքելով Փաստաբանի դիմումին Պալատը գրություն է հասցեագրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն պետի տեղակալին, որում ներկայացրել է Պալատի դիրքորոշումը փաստաբանի հարցաքննության անհնարինության վերաբերյալ:
- Փաստաբանը դիմել է Փաստաբանների պալատ հայտնելով, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանի դատավորն արգելել է իր օգնականին (փաստաբանի օգնական) մասնակցել դռնփակ դատական նիստին: ՀՀ փաստաբանների պալատը ուսումնասիրելով ներկայացված դիմումը, գրություն է հասցեագրել Բարձրագույն դատական խորհրդին «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանի օգնականին տրված կարգավիճակի, վերջինիս առաքելության, ինչպես նաև այդ համատեքստում դատական նիստերին նրա մասնակցությունը խոչընդոտելու անթույլատրելիության վերաբերյալ: Պալատը խնդրել է ձեռնարկել միջոցներ նմանօրինակ խոչընդոտների հետագա վերացման ուղղությամբ: Նշված գրությունը Դատական դեպարտամենտը շրջանառել է իրավասու դատարաններ:
- ՀՀ փաստաբանների պալատը ուսումնասիրելով Փաստաբանի ներկայացրած դիմումը, գրություն է հասցեագրել Քննչական կոմիտեի նախագահին՝ ներկայացնելով Փաստաբանների պալատի դիրքորոշումը «Փաստաբանության մասին» օրենքով փաստաբանի օգնականին տրված կարգավիճակի, վերջինիս առաքելության, ինչպես նաև այդ համատեքստում ապացուցողական և վարութային գործողություններին նրա մասնակցությունը խոչընդոտելու անթույլատրելիության վերաբերյալ:
- Փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններ պարունակող էլեկտրոնային սարքերի առգրավման առնչությամբ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հրատապ կարգով քննարկում է իրականացրել և տարածել է հայտարարություն այն մասին, որ նույնիսկ, փաստաբանի կողմից կատարված առերևույթ հանցագործության դեպքի հանգամանքների վերաբերյալ քննություն իրականացնելիս, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է ձեռնպահ մնա փաստաբանի այլ վստահորդներին վերաբերող փաստաբանական գաղտնիքին հասանելիություն ունենալուց: Հանձնաժողովն արձանագրել է, որ այդպիսի գործողություններն անընդունելի են և արգելված: Անդրադառնալով փաստաբանի հեռախոսի և դյուրակիր համակարգչի առգրավմանը, Հանձնաժողովը նշել է, որ քրեական վարույթն իրականացնող մարմինն օբյեկտիվորեն հնարավորություն չունի փաստաբանական գաղտնիքի երաշխիքների պահպանմամբ իրականացնելու փաստաբանի էլեկտրոնային կրիչի պարունակությունը բացահայտող ապացուցողական կամ վարութային գործողություն, ուստի այդպիսի ցանկացած գործողություն հղի է փաստաբանական գաղտնիքի պաշտպանության իրավական երաշխիքների խախտման վտանգով: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը հորդորել է նախաքննական մարմնին ձեռնպահ մնալ փաստաբանի հեռախոսի և

դյուրակիր համակարգչի պարունակությունը հասանելի դարձնող ապացուցողական կամ վարութային ցանկացած գործողություն կատարելուց և վերադարձնել դրանք:

- Փաստաբանն ահազանգել է, որ Երևանի քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչները **խուզարկություն են իրականացնում** իր գրասենյակում: ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալը և արագ արձագանքման հանձնախմբի համակարգողն այցելել են գրասենյակ: Ձեռնարկված միջոցներով հնարավոր է եղել կանխել փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավումը:
- Փաստաբանը դիմել է Փաստաբանների պալատ հայտնելով, որ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի քննիչը քրեական գործի շրջանակներում իրեն հրավիրում է հարցաքննության: Փաստաբանի պնդմամբ հարցաքննությունը կապված էր իր կողմից 7 տարի առաջ տրամադրված փաստաբանական ծառայության հետ, առնչվում է փաստաբանական գաղտնիք կազմող տեղեկություններին:
- Դիմումը և ներկայացված հանգամանքները քննարկվել են Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կողմից: Արդյունքում Հանձնաժողովը գրություն է հասցեագրել ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն պետի տեղակալին, որում ներկայացվել է Պալատի դիրքորոշումը Փաստաբանի **հարցաքննության անհնարինության վերաբերյալ**: Արդյունքում վարույթն իրականացնող մարմինը ձեռնպահ է մնացել Փաստաբանին հարցաքննելուց:
- 2025 թվականի մայիսի 30-ին դիմել են Փաստաբանների պալատ տեղեկացնելով, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում իրականացվող քրեական վարույթով 2025 թվականի մայիսի 27-ին խուզարկություն է կատարվել իրենց աշխատավայրերում, որի արդյունքում առգրավվել են փաստաբանների աշխատանքային համակարգիչները:

Հրատապ կարգով նշված հարցը քննարկվել է Փաստաբաններ իրավունքների պաշտպանության հանձնաժողովի կողմից: Փաստաբանների աշխատանքային փաստաթղթերի խուզարկության և համակարգիչների առգրավման հարցը Հանձնաժողովը քննարկել է փաստաբանական գաղտնիքի անձեռնմխելիության և դրա պաշտպանության երաշխիքների, ինչպես նաև փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության համատեքստում: Հանձնաժողովը հորդորել է քրեական վարույթն իրականացնող մարմնին զերծ մնալ փաստաբանական գաղտնիքի նկատմամբ ոտնձգություն ենթադրող ցանկացած գործողությունից, այդ թվում՝ համակարգիչների պարունակությունը բացահայտելուն ուղղված որևէ դատավարական գործողություն կատարելուց, և վերադարձնել դրանք:

Նշվածի առնչությամբ ՀՀ փաստաբանների պալատը դիմել է միջազգային գործընկերներին, այդ թվում՝ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին, վերջիններիս ուշադրությունը հրավիրելով նշված փաստաբանական գրասենյակում կատարված խուզարկության դեպքին:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE) պաշտոնական գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին նշված փաստաբանական գրասենյակում կատարված խուզարկության և առգրավման դեպքի կապակցությամբ՝ իր մտահոգությունը հայտնելով Հայաստանում փաստաբանների մասնագիտական իրավունքների խախտումների մասին հաղորդումների առնչությամբ:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը կոչ է արել Հայաստանի իշխանություններին ապահովել փաստաբանի գաղտնիքը խախտող բոլոր գործողությունների անհապաղ դադարեցումը, բոլոր առգրավված նյութերի անհապաղ վերադարձը, փաստաբանների անվտանգ և անկախ մասնագիտական գործունեության իրականացումը՝ ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները:

CCBE-ն նաև հիշեցրել է, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ առանց վախենալու հաշվեհարդարից, խոչընդոտներից, սպառնալիքներից կամ հետապնդումներից՝ արդարադատության իրականացման անկախությունն ու ամբողջականությունը և օրենքի գերակայությունը պահպանելու համար:

Ձեռնարկված միջոցները տվել են ցանկալի արդյունք՝ Հակակոռուպցիոն կոմիտեն վերադարձրել է փաստաբանական գրասենյակից վերցված (առգրավված) բոլոր համակարգիչները:

❖ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՐԾԱԴՐՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

2023 թվականն աչքի է ընկել բացասական իրադարձություններով, մասնավորապես՝ պետական մարմինների կողմից փաստաբանների նկատմամբ իրականացված նախադեպը չունեցող ոտնձգություններով: Իրենց մասնագիտական գործունեությունն իրականացնող երեք փաստաբաններ նշված տարվա ընթացքում ենթարկվել են բռնությունների:

Այս իրադարձությունները ստացել են փաստաբանական համայնքի կոշտ արձագանքը:

Փաստաբանների պալատի նախաձեռնությամբ հրավիրվել են ժողովներ, իրականացվել են մի շարք բողոքի ակցիաներ, հրապարակվել են բռնությունը դատապարտող, այդ դեպքերի շուրջ պատշաճ քննություն իրականացնելու անհրաժեշտության մասին հայտարարություններ:

Պալատը նաև դիմել է մի շարք միջազգային կառույցների, որոնցից ստացել է

նշված երևույթը դատապարտող արձագանքներ:

Մասնավորապես.

2023 թվականի փետրվարի 9-ին Ոստիկանության Էրեբունու բաժնում փաստաբանները իրենց մասնագիտական գործունեության իրականացման ժամանակ ոստիկանների կողմից ծեծի են ենթարկվել: Դեպքի մասին տեղեկանալուն պես Փաստաբանների պալատը հրավիրել է մամուլի ասուլիս: Ասուլիսի ընթացքում զանգվածային լրատվության միջոցների հետ զրույցում բռնության ենթարկված փաստաբաններն ու նրանց ներկայացուցիչը ներկայացրել են դեպքի հանգամանքները:

Նույն օրը, Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովը հայտարարություն է տարածել, որով այսպիսի երևույթը խիստ վրդովեցուցիչ և իր բնույթով աննախադեպ է համարել:

Հանձնաժողովը պահանջել է իրավասու մարմիններից իրականացնել հետևողական քննություն դեպքի առնչությամբ և բոլոր մեղավոր անձանց կանչել

քրեական պատասխանատվության, ինչպես նաև հավաստիացրել է, որ անզիջում հետևողականություն է ցուցաբերելու, որպեսզի մեղավոր անձինք ենթարկվեն համարժեք պատասխանատվության:

2023 թվականի փետրվարի 13-ին ՀՀ փաստաբանների պալատում հրավիրվել և կայացել է ակումբի նիստ, որի արդյունքներով ՀՀ փաստաբանների պալատի նիստին ներկա փաստաբանները որոշել են Ներքին գործերի նախարարությունից պահանջել՝ անհապաղ դադարեցնել Էրեբունու բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալի և օպերլիազորի լիազորությունները, միջադեպի մյուս ոստիկան մասնակիցներին ենթարկել պատասխանատվության, ինչպես նաև այս հարցը կարճ ժամկետում չլուծելու դեպքում, հրավիրել ակումբի նիստ բողոքի ակցիաների կազմակերպչական հարցերը քննարկելու համար:

ՀՀ փաստաբանների պալատը, նպատակ ունենալով միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել ոստիկանության աշխատակիցների կողմից դրսևորած հակահիրավական վարքագծիը, դիմել է Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդին (CCBE)՝ ակնկալելով նաև միջազգային կառույցների կոշտ արձագանքը:

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը (CCBE), որը ներկայացնում է 46 երկրների փաստաբաններին ու փաստաբանական միությունները, և նրանց միջոցով ավելի քան մեկ միլիոն եվրոպացի իրավաբանների, իր մտահոգությունն է հայտնել փաստաբանների նկատմամբ՝ ոստիկանության աշխատակիցների կողմից կատարված ֆիզիկական և բանավոր ոտնձգության վերաբերյալ:

Բացի այդ, 2023 թվականի հունիսի 13-ին տեղեկություն է ստացվել այն մասին, որ Ոստիկանության Կենտրոնական բաժնում մասնագիտական պարտականությունները կատարելու համար ներկայացած փաստաբանի նկատմամբ ոստիկանության բաժնի ծառայողների և պարեկների կողմից բռնություն է գործադրվել: Դեպքի առթիվ ՀՀ փաստաբանների պալատի դահլիճում հրավիրվել և անց է կացվել մամուլի ասուլիս, որի ընթացքում ներկայացվել են դեպքի հանգամանքները:

ՀՀ փաստաբանների պալատի ակումբի նիստին ներկա փաստաբանները որոշել են խստորեն դատապարտել ՆԳՆ Ոստիկանության Երևանի քաղաքային վարչության Կենտրոնի բաժնի և այլ ոստիկանների կողմից 07.06.2023թ. փաստաբանին ծեծի ենթարկելու, նրա նկատմամբ ձեռնաշղթաներ կիրառելու, արցունքաբեր գազ կիրառելու, ինչպես նաև փաստաբանին ձերբակալելու և խուզարկության ենթարկելու դեպքերը: Ներքին գործերի նախարարությունից պահանջել են անհապաղ դադարեցնել փաստաբանի ծեծին մասնակցած ոստիկանների լիազորությունները: ՀՀ գլխավոր դատախազից պահանջել են խիստ կարգապահական պատասխանատվության ենթարկել քրեական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազին, այն բանի համար, որ նա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասով

սահմանված քրեական հետապնդման հարուցման իրավաչափության հարցում պատասխանատու լինելով փաստաբանի նկատմամբ անհիմն քրեական հետապնդում է հարուցել:

Չստանալով ակնկալվող արդյունքը Պալատը դիմել է Վարչական դատարան, Վարչական վերաքննիչ դատարան, Վճռաբեկ դատարան, Սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Նիստին ներկա փաստաբանները որոշել են նաև ՀՀ քննչական կոմիտեի նախագահից պահանջել՝ խիստ կարգապահական պատասխանատվության ենթարկել վարույթն իրականացնող քննիչին, այն բանի համար, որ նա անտեսել է ոստիկանների կողմից քաղաքացու խոշտանգման, փաստաբանին ծեծելու, խուզարկելու, ձերբակալելու ակնառու փաստերը և գործի քննությունը տարել է միակողմանիորեն: Ինչպես նաև ՀՀ քննչական կոմիտեից պահանջել են փետրվարի 10-ին փաստաբանների նկատմամբ կիրառված բռնության դեպքի կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթով նախաքննությունն իրականացնել սեղմ ժամկետում:

2023 թվականի հունիսի 16-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքից մեկնարկել է փաստաբանների երթը դեպի Հայաստանում ԵՄ պատվիրակության գրասենյակ:

Երթը նպատակ ուներ հանրության և միջազգային կառույցների ուշադրությունը հրավիրել վերջին շրջանում ոստիկանության ծառայողների կողմից փաստաբանների նկատմամբ կիրառվող բռնության դեպքերի, ինչպես նաև հանրային իրազեկման եղանակով հասնել համապատասխան կառույցների պատշաճ արձագանքին և կանխարգելել նմանատիպ դեպքերը: Երթի մասնակից փաստաբանները նշված հարցով ԵՄ պատվիրակությանը ներկայացրել են նաև գրավոր դիմում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

EUROPEAN LAWYERS
EUROPEAN BARS
CCBE
BARREAUX EUROPÉENS
AVOCATS EUROPÉENS

Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդն (CCBE), ի պատասխան ՀՀ փաստաբանների պալատի դիմումին, անդրադառնալով 2023 թվականի ընթացքում տեղի ունեցած փաստաբաններին բռնության

ենթարկելու երկու դեպքերին, խստորեն դատապարտել է փաստաբանների նկատմամբ բռնություններն ու կոչով դիմել ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանին:

Գրությամբ Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը խստորեն դատապարտել է վերոհիշյալ փաստաբանների նկատմամբ բռնության այս գործողությունները, և հորդորել է ՀՀ նախագահին անել հնարավոր ամեն ինչ՝ ապահովելու այդ բռնության դեպքերի լիարժեք և անաչառ քննությունը՝ պատասխանատուներին միջազգային չափանիշներին համապատասխան պատասխանատվության ենթարկելու նպատակով: Ի լրումն, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհուրդը հիշեցրել է, որ բոլոր փաստաբանները պետք է կարողանան կատարել իրենց մասնագիտական պարտականությունները՝ չվախենալով հաշվեհարդարից, խոչընդոտներից, ահաբեկումից կամ ոտնձգություններից՝ պահպանելու արդարադատության իրականացման և օրենքի գերակայության անկախությունն ու ամբողջականությունը:

2023 թվականի հունիսի 20-ին տեղի է ունեցել փաստաբանների բողոքի հերթական ակցիան՝ 2023 թվականի հունիսի 07-ին փաստաբանին ծեծի ենթարկելու դեպքի հետ կապված:

Ակցիայի ընթացքում փաստաբանները գրավոր պահանջ են ներկայացրել ՆԳՆ նախարար Վահե Ղազարյանին՝ բռնությունը ոստիկանության համակարգից արմատախիլ անելու կոչով, մասնավորապես՝ պահանջել են անհապաղ դադարեցնել փաստաբանի ծեծին մասնակցած ոստիկանների, ինչպես նաև Ոստիկանության Երևանի քաղաքային վարչության Կենտրոն բաժնի պետի լիազորությունները: Գրավոր պահանջին երկու օրվա ընթացքում միացել է շուրջ 900 փաստաբան:

2023 թվականի հունիսի 21-ին տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ: Նիստի ընթացքում որոշվել է մեկօրյա բողոքի ակցիա իրականացնել 2023 թվականի հունիսի 26-ին՝ այդ օրը հրաժարվելով Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

2023 թվականի հունիսի 26-ին՝ Խոշտանգումների զոհերի աջակցության միջազգային օրը փաստաբաններն իրականացել են մեկօրյա գործադուլ: Նախապես հայտարարված գործադուլի շրջանակներում նշված օրը ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել ասուլիս-քննարկում:

2023 թվականի հունիսի 26-ին Փաստաբանների պալատից մեկնարկեց փաստաբանների բողոքի երթը դեպի Ոստիկանության Կենտրոնականի բաժին: Երթի հիմնական նպատակն էր կոտրել այն լռությունը, որը որդեգրել են պետական իրավասու մարմինները՝ իմանալով փաստաբանների նկատմամբ իրականացված բռնությունների մասին:

2023 թվականի հունիսի 27-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինի հետ: Կողմերը քննարկել են փաստաբանական համայնքի շուրջ ստեղծված իրավիճակը և ընդհանուր դատաիրավական բարեփոխումներին վերաբերող հարցեր:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը և փաստաբանական համայնքի այլ ներկայացուցիչներ՝ ԱԺ Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի հրավերով 2023 թվականի հունիսի 30-ին մասնակցել են «Բռնության դեպքերի աճը և փաստաբանների մասնագիտական գործունեության առջև ծառացած խնդիրները» թեմայով աշխատանքային քննարկմանը:

2023 թվականի հուլիսի 06-ին տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ, որին ներկա փաստաբանները ներկայացրել են իրենց մտահոգությունները՝ փաստաբանների նկատմամբ բռնության դեպքերի կապակցությամբ: Որոշում է կայացվել իրականացնել եռօրյա բողոքի ակցիա:

Նույն թվականի հուլիսի 11-ին մեկնարկել է փաստաբանների բողոքի հերթական ակցիան: Փաստաբանները երթ են իրականացրել դեպի Ներքին գործերի նախարարություն: Իրականացվող ակցիայի արդյունքում տեղի է ունեցել հանդիպում Փաստաբանների պալատի և ՆԳՆ նախարարության ներկայացուցիչների միջև:

Հանդիպման արդյունքում համատեղ ընդունել է հայտարարության այն մասին, որ Կողմերը անընդունելի են համարում բռնությունների ցանկացած դրսևորում, իսկ Ներքին գործերի նախարարությունը հավաստիացնում է, որ միջադեպերին ներգրավված ոստիկանության ծառայողների արարքներին կտրվի պատշաճ իրավական գնահատական՝ ապահովելով բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն:

2023թ. հուլիսի 11-ին տեղի է ունեցել փաստաբանների ակումբի նիստ: Որոշվել է շարունակել բողոքի ակցիան՝ 2023 թվականի հուլիսի 12-ին և 13-ին հրաժարվել Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում (այդ թվում՝ դատարաններում, նախաքննության մարմիններում) պաշտպանություն կամ ներկայացուցչություն իրականացնելուց:

2023 թվականի հուլիսի 13-ին փաստաբաններն ամփոփել են ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացված խոշտանգումների դեմ բողոքի գործողությունների երրորդ օրը: Եռօրյա բողոքի ակցիան եզրափակվել է հանրային կրթական մարաթոնով:

2025 թվականին **ՄԱԿ խոշտանգումների դեմ կոմիտեն հրապարակել է Հայաստանի վերաբերյալ զեկույց, որում գնահատվում է** Հայաստանում խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարի և հիմնարար իրավական երաշխիքների ապահովման վիճակը: Կոմիտեն մասնավորապես արձանագրել է,

որ Հայաստանը պետք է երաշխավորի փաստաբանների անկախությունը, այդ թվում՝ ապահովելով, ներքին օրենսդրության լիովին համապատասխանեցումը Փաստաբանների դերի վերաբերյալ հիմնական սկզբունքներին (Հավանայի սկզբունքներ) և այլ համապատասխան միջազգային չափանիշներին, ինչպես նաև անհապաղ հետաքննելով և քրեական հետապնդում իրականացնելով փաստաբանների նկատմամբ ոտնձգությունների բոլոր դեպքերի համար: Զեկույցում նշվում է, որ Հայաստանը պետք է ապահովի, որ խոշտանգումների կամ վատ վերաբերմունքի վերաբերյալ բոլոր բողոքները անհապաղ և անաչառորեն քննվեն անկախ մարմնի կողմից, որ անմիջապես կասեցվի կասկածյալ պաշտոնյաների աշխատանքը քննության ողջ ընթացքում:

III. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ, ՈՉ ՖՈՐՄԱԼ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական գործունեություն իրականացնելիս իրավունքների պաշտպանության շրջանակներում փաստաբաններն առնչվում են տարբեր իրավակիրառ մարմինների, այդ թվում՝ դատական համակարգում դրական և բացասական երևույթների հետ: Նշվածով պայմանավորված՝ ձևավորվում է նաև մասնագիտական կարծիք այդ մարմինների աշխատանքի արդյունավետության վերաբերյալ:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2014 թվականի թիվ 17 կարծիքում նշվել է, որ գնահատումն առանցքային նշանակություն ունի արդարադատության որակի բարձրացման համատեքստում:

Վերոգրյալով պայմանավորված ՀՀ փաստաբանների պալատը որպես փաստաբանական համայնքը համախմբող կառույց՝ որոշում է կայացրել ձեռնարկել միջոցներ ստեղծելու համար իրավակիրառ մարմինների, այդ թվում՝

դատավորների, դատախազների, քննիչների և մի շարք այլ պաշտոնատար անձանց միջազգային չափորոշիչների վրա հիմնված, ոչ ֆորմալ, օբյեկտիվ գնահատման համակարգ, որը կնպաստի պետական կառույցների աշխատանքի որակի և արդյունավետության մակարդակի բարձրացմանն ու այդ մարմիններում բացասական տարատեսակ երևույթների նվազմանը, որպես արդյունք՝ բարելավի արդարադատության համակարգը:

Նշված ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ, որոնց ընթացքում քննարկվել են գնահատման համակարգի ստեղծման վերաբերյալ հարցերը, կենսագործման հեռանկարները, ներդրման եղանակները, գործարկման ձևերը, գնահատման համակարգի արդյունավետությունն ու օբյեկտիվությունը, գնահատման չափանիշների տեսակները և մի շարք այլ հարցեր, ուսումնասիրվել է միջազգային փորձը՝ այլ պետություններում համանման համակարգերի առկայության, դրանց տեսակների, ստացված արդյունքների օբյեկտիվության, ինչպես նաև մի շարք կարևոր և առանցքային այլ հարցերի վերաբերյալ:

Նախաձեռնվել են հանդիպում-քննարկումներ միջազգային գործընկերների հետ: Հանդիպումների ընթացքում միջազգային փորձի տեսանկյունից քննարկվել են գնահատման համակարգի արդյունավետությունը, ներդրման մեխանիզմները, օբյեկտիվությունն ապահովող գնահատման չափանիշների տեսակները և մի շարք այլ հարցեր:

Ի թիվս այլ հանդիպումների, ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է ԱՄՆ դատավոր Թոդ Էդինսին, որի ընթացքում քննարկվել են դատավորների գործունեության գնահատման վերաբերյալ Ամերիկայի Միացյալ Նահանգների փորձը:

Ակնկալվող արդյունքին հասնելու համար Պալատի կողմից իրականացվող աշխատանքները շարունակվում են:

IV. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԴԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես տարաբնույթ նախաձեռնություններ և միջոցառումներ է իրականացրել, որոնք նպաստել են հասարակության մեջ փաստաբանի դերի և հեղինակության բարձրացմանը:

Նշված ժամանակահատվածում տեղի են ունեցել հետևյալ միջոցառումները.

- ՀՀ փաստաբանական դպրոցում բացվել է Ռուբեն Սահակյանի անվան լսարանը:

- Յուրաքանչյուր տարի իրականացվել է «Անվճար իրավաբանական օգնություն կանանց» միջոցառումը: Նշված նախաձեռնությանը միացել են Փաստաբանական դպրոցը *(Փաստաբանական ակադեմիա)*, մի քանի տասնյակ փաստաբանական գրասենյակներ՝ իրենց թիմերով, հարյուրավոր անհատ փաստաբաններ:
- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը և Հայաստանի Հանրապետության փաստաբանական ակադեմիան 2023 թվականի հոկտեմբերի 3-ից սկսած ամենօրյա ռեժիմով արցախցիներին տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:
- ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնության համաձայն՝ յուրաքանչյուր տարի փաստաբանական համայնքն իր հարգանքի տուրքն է մատուցել՝ հանուն հայրենիքի նահատակված հերոսների ընտանիքներին: Սևան քաղաքում իրականացվել է ծառատունկ նվիրված փաստաբանի՝ հայրենիքի պաշտպանության համար զոհված որդու հիշատակին:
- Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի ներկայացուցիչները յուրաքանչյուր տարի այցելել են Երևանում «Մայր Թերեզայի քույրեր» միսիոներների բարեգործական կազմակերպության մանկատուն: Մանկատան երեխաներին տրամադրվել են անհրաժեշտ իրեր:
- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 27.09.2023 թվականի 236-Ա որոշմամբ ստեղծվել է փաստահավաք խումբ՝ Ադրբեջանի կողմից Արցախի բնակչության նկատմամբ թույլ տրված վայրագությունների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներում և սոցիալական այլ հարթակներում հրապարակված խիստ մտահոգիչ, անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունքի վերաբերյալ տեղեկությունները հավաքագրելու նպատակով:
- 2024 թվականի հուլիսի 6-ին և 7-ին ՀՀ փաստաբանների պալատը՝ ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ, լրատվամիջոցների ներկայացուցիչների և փաստաբանների համար կազմակերպել է աշխատաժողով: Ի թիվս այլնի, քննարկվել են տեղեկատվության ազատությունը և տեղեկատվություն ստանալու սահմանափակումները, ապատեղեկատվության դեմ պայքարը, գործնական խնդիրները, խոսքի ազատության սահմանափակումները, պատվի, արժանապատվության (զրպարտությունից) պաշտպանությունը, Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի, փաստաբանների հետ ԶԼՄ-ների համագործակցության առանձնահատկությունները: Աշխատաժողովը տեղի է ունեցել Ծաղկաձոր քաղաքում՝ Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:
- 2024 թվականի դեկտեմբերի 20-ին Փաստաբանների պալատի նախագահը և Պալատի ներկայացուցիչները հանդիպում են ունեցել զանգվածային լրատվության միջոցների գործընկերների հետ: Հանդիպումն անցել է թեյի սեղանի

շուրջ՝ ոչ պաշտոնական ձևաչափով: Փաստաբանների պալատի նախագահը մեդիայի գործընկերներին է ներկայացրել 2024 թվականի ընթացքում Պալատի կողմից կատարված աշխատանքները: Նա նաև խոսել է փաստաբանական համայնքի առաջ ծառացած խնդիրների մասին, մասնավորապես փաստաբանների հարկային բեռի ավելացման և անվճար իրավաբանական օգնության սահմանափակման, որի հետևանքով վնասվելու է Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը: Հանդիպման ընթացքում փաստաբանական և լրագրողական համայնքի ներկայացուցիչները քննարկել են ոլորտային ամենատարբեր թեմաներ: Իր եզրափակիչ խոսքում Սիմոն Բաբայանը զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին շնորհակալություն է հայտնել փաստաբանական ինստիտուտին վերաբերելի թեմաները, փաստաբանական համայնքի խնդիրները պատշաճ լուսաբանելու և Պալատի հետ իրականացվող համագործակցության համար:

- Յուրաքանչյուր տարի դեկտեմբերի 6-ին Փաստաբանների պալատը կազմակերպել է Փաստաբանության օրվա տոնակատարությունը: Նշված միջոցառման ընթացքում խորհրդանշական կերպով փաստաբանական համայնքը համալրող փաստաբաններին շնորհվել են արտոնագրեր: ՀՀ Փաստաբանության օրվա առթիվ Փաստաբանների պալատի և Փաստաբանական ակադեմիայի կողմից պատվավոր կոչումների և շնորհակալագրերի են արժանացել լավագույն համագործակցությունն ունեցած տասնյակ գործընկերները, ինչպես նաև Փաստաբանական ակադեմիայում ուսումնառության ընթացքում բարձր առաջադիմություն գրանցած ունկնդիրները, Փաստաբանների պալատի նախագահի կողմից պատվոգրերով և շնորհակալագրերով պարգևատրվել են մի շարք գործընկերներ՝ փաստաբանության առջև ծառացած խնդիրների ու մարտահրավերների հաղթահարմանն ուղղված միջոցառումներին օժանդակելու, ինստիտուտի պաշտպանությանը նպաստելու, մասնագիտական աջակցություն ցուցաբերելու և հանրային պաշտպանությանն օժանդակելու համար:

V. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԽԹԱՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանական ծառայությունների մատուցման շուկայում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց համաձայն՝ առկա է փաստաբանների զբաղվածությանն աջակցելու անհրաժեշտություն՝ հատկապես երիտասարդ և մարզաբնակ փաստաբանների շրջանում: Նշված ուղղությամբ Փաստաբանների պալատը ձեռնարկել է հետևյալ միջոցները՝

- ՀՀ փաստաբանների պալատը ձեռնամուխ է եղել ստեղծել փաստաբանական ծառայությունների պահանջարկ ունեցող տնտեսվարողների էլեկտրոնային հարթակ, ինչպես նաև փաստաբանի աշխատուժի պահանջարկ ունեցող փաստաբանական գրասենյակների հարթակ:
- ՀՀ փաստաբանների պալատը նախաձեռնել է ստեղծել Փաստաբանների պալատի նոր կայքէջ, որը պետք է ներառի նոր գործիքակազմեր: Մասնագիտական խմբերի հետ քննարկվել են արդի ռեսուրսների ու դրանց օպտիմալ օգտագործման հնարավորությունները, էլեկտրոնային հարթակի ստեղծման համար անհրաժեշտ ժամկետները, գործիքակազմերը, որոնք պետք է ընդգրկվեն հարթակում:
- Երիտասարդական խորհուրդը հավաքագրել և երիտասարդ փաստաբաններին է փոխանցել թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտարարություններ:
- Փաստաբանների զբաղվածությունը խթանելու և Հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատը հայտարարել և անցկացվել է մրցույթ:
- Երիտասարդ փաստաբաններին տրամադրվել է ՀՀ փաստաբանների պալատում գտնվող աշխատասենյակից անվճար օգտվելու հնարավորություն:

VI. ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Սույն գլխում ներկայացված են հանրային պաշտպանության ինստիտուտի զարգացման համար կատարված անհրաժեշտ գործողությունները և բարեփոխումները:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակաբար աշխատանքներ են կատարվել մատուցվող ծառայության որակը բարելավելու ուղղությամբ, ինչպես հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և տեղակալների կողմից անմիջական հսկողության, այնպես էլ գրասենյակի մշտադիտարկման խմբի գործունեությամբ:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման սահմանված ընթացակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունն ապահովելու անհրաժեշտությամբ պայմանավորված մշտադիտարկման խումբն իրականացրել է հանրային պաշտպանների կողմից վարվող գործերի վերաբերյալ գրասենյակի էլեկտրոնային տեղեկատվական համակարգում առկա տվյալների ստուգում, անճշտությունների վերհանում, դատական նիստերի դիտարկում, դրանց հանրային պաշտպանների կողմից առանց հարգելի պատճառների չներկայանալու դեպքերի հայտնաբերում, փաստաբանական վարույթներին ներկայացվող պարտադիր պահանջների ստուգում, վստահորդների հետ տարվող աշխատանքների որակի գնահատում, այդ թվում՝ շահառուներից հարցաթերթիկների միջոցով տեղեկատվություն հավաքելու միջոցով:

Գրասենյակի կողմից ցուցաբերվող իրավաբանական օգնության որակի վերահսկողության նպատակներով յուրաքանչյուր տարվա վերջում իրականացվում է հանրային պաշտպանների կատարած աշխատանքի արդյունավետության գնահատում՝ որակական և քանակական չափանիշներով:

Հանրային պաշտպանների միջև առողջ մրցակցության մթնոլորտ ձևավորելու, մատուցվող ծառայությունների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ գնահատման արդյունքներով հաշվետու տարվա ընթացքում նվազ արդյունավետություն ցուցաբերած հանրային պաշտպանների հետ աշխատանքային պայմանագրերը չի երկարաձգվում և նրանց փոխարինելու և թափուր հաստիքները նոր, այդ թվում՝ երիտասարդ բանիմաց փաստաբաններով համալրելու նպատակով, յուրաքանչյուր տարի կազմակերպվում է բաց, թափանցիկ մրցույթ, որին առանց սահմանափակման կարող է մասնակցել յուրաքանչյուր՝ արտոնագրի գործողությունը չկասեցված փաստաբան:

Յուրաքանչյուր տարի սուբյեկտիվ գործոնի ազդեցությունը բացառող գնահատման գործընթացով անց է կացվել մրցույթ ՀՊԳ հաստիքների համալրման նպատակով: Մրցույթն անց է կացվել երկու փուլով՝ գրավոր և բանավոր (հարցազրույց):

Յուրաքանչյուր տարի նոյեմբեր ամսին Փաստաբանների պալատը հայտարարել է մրցույթ Երևան քաղաքում և մարզերում հանրային պաշտպանների թափուր հաստիքները համալրելու համար: 2021-2024 թվականներին մրցույթ է հայտարարվել 26 ամբողջական հաստիք համալրելու նպատակով:

Բացի այդ, անցկացվել են նաև լրացուցիչ մրցույթներ տարվա ընթացքում թափուր մնացած հաստիքները համալրելու նպատակով:

Փաստաբանների պալատի կողմից հաստիքների համալրման մրցութային քաղաքականության որդեգրումը նպատակ է հետապնդում, նախ և առաջ, ապահովել հանրային պաշտպան դառնալու գործընթացի թափանցիկությունը, ինչպես նաև օբյեկտիվ գնահատել հանրային պաշտպանի թեկնածուի մասնագիտական պատրաստվածությունը:

Փաստաբանների պալատը շարունակել է իրականացնել զանգվածային լրատվության տարբեր միջոցներով հանրային պաշտպանների գործունեության լուսաբանմանն ուղղված միջոցառումները:

Անվճար իրավաբանական օգնության տրամադրման վերաբերյալ հանրությանն իրազեկելու նպատակով՝ Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն հիմնադրամի հետ համատեղ իրականացված ծրագրի շրջանակներում ստեղծվել է տեղեկատվական անիմացիոն հոլովակն: Հոլովակը տեղադրվել է հանրային պաշտպանի գրասենյակի կայքի գլխավոր էջում: Այն տեղադրվել է նաև գրասենյակի «Facebook» սոցիալական ցանցում բացված օգտահաշվում և տարածվել վճարովի առաջխաղացման եղանակով:

«Փաստաբանության մասին» օրենքի փոփոխությամբ ներդրվել են նաև հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, ինչպես նաև այլ անձանց կողմից կամավոր անհատույց և անվճար իրավաբանական օգնության տրամադրման համակարգը:

Հանրային պաշտպանի գրասենյակը՝ «Փաստաբանության մասին» օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասում նշված անձանց հանրային պաշտպանությունը ապահովելու համար կարող է ներգրավել հանրային պաշտպան չհանդիսացող երեք խումբ անձանց:

Հատկանշական է նաև, որ կամավոր անհատույց իրավաբանական օգնության տրամադրումը խրախուսելու նպատակով փաստաբանների պալատի խորհուրդի որոշմամբ սահմանվել են խրախուսման միջոցներ, այդ թվում՝ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականությունից ազատում:

Այս փոփոխության պայմաններում, հանրային պաշտպանության շահառուները կամավոր անհատույց անվճար իրավաբանական օգնություն կարող են ստանալ Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված բարձրագույն ուսումնական հաստատությունների և փաստաբանական ակադեմիայի կողմից կազմակերպվող իրավաբանական կլինիկաների ուսանողների (ունկնդիրների) օժանդակության միջոցով:

Փաստաբանական դպրոցի (ակադեմիայի) իրավաբանական կլինիկան ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ մինչ օրս իրականացնում է քաղաքացիներին անվճար իրավական խորհրդատվության տրամադրման ծրագիր: Հաշվետու ողջ ժամանակահատվածում Փաստաբանների պալատում յուրաքանչյուր հինգշաբթի օր անվճար խորհրդատվություն է տրամադրվել Փաստաբանական դպրոցի (ակադեմիայի) ունկնդիրների մասնակցությամբ:

2023 թվականի հունվարին Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի և ՀՀ փաստաբանական ակադեմիայի կառավարման խորհրդի կողմից համատեղ սահմանվել է Հանրային պաշտպանի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման գործընթացին փաստաբանական ակադեմիայի ունկնդիրների ներգրավման կարգը, որի շրջանակում հաշվետու ժամանակահատվածում անվճար իրավաբանական օգնությունից օգտվել են 519 անձ: Հանրային պաշտպան չհանդիսացող անվճար և կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների ցուցակներում 2023 թվականի ընթացքում ընդգրկվել է 10 փաստաբան: Հանրային պաշտպան չհանդիսացող անվճար և կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների ցուցակում՝ 2024 թվականի ընթացքում ընդգրկվել է 20 փաստաբան, անվճար իրավաբանական օգնությունից օգտվել են 958 անձ:

Բացի այդ Հանրային պաշտպանի գրասենյակում գործում է «Պրո Բոնո» ծրագիրը: Դրա մոդելը 2022 թվականին ներմուծվել է «Փաստաբանության մասին» օրենք: Այս ծրագրի շրջանակներում անհատ փաստաբաններն առանձին գործերով իրավաբանական օգնություն են ցուցաբերում գրասենյակի շահառուներին, ինչի դիմաց Պալատը նրանց տրամադրում է աշխատասենյակ և աշխատանքային անհրաժեշտ պարագաներ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքային պայմանները բարելավելու համար ձեռք են բերվել շուրջ 45 դյուրակիր համակարգիչ, 14 համակարգիչ, 11 բազմաֆունկցիոնալ տպիչ սարք:

Ձեռք են բերվել թվով 56 աթոռ, 26 մեծ և փոքր պահարաներ, 26 սեղան, սանիտարական տեխնիկա, բազմաթիվ օրենսգրքեր:

Կահավորվել է Գրասենյակի Երևանի նստավայրի հանգստի սենյակը, հիմնովին վերանորոգվել է Երևանի նստավայրի ողջ հատակը, միջանցքի պատերը, աստիճանավանդակը, բոլոր դռները փոխարինվել են նորով, մեկ աշխատասենյակ վերանորոգվել է հիմնովին, որի համար ձեռք է բերվել գրասենյակային գույք և տեխնիկա, Գրասենյակի արխիվը համալրվել է նոր դարակաշարով:

Կարիքների գնահատման արդյունքներից ելնելով մարզային մի շարք նստավայրեր հագեցվել են գրասենյակային գույքով և տեխնիկայով, վերանորոգվել են Գորիսի և Վանաձորի նստավայրերը:

Նստավայրեր են բացվել Իջևան, Բերոդում, Եղվարդում, Չարենցավանում, Մարտունիում, Աշտարակում, Մասիսում:

Փաստաբանների պալատի և ՀՀ-ում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության միջև ստորագրված համագործակցության համաձայնագրի շրջանակում՝ ապաստան հայցողների և փախստականների համար առավել որակյալ և հասանելի իրավաբանական օգնության ապահովման նպատակով նշանակվել է խորհրդատու-փորձագետ, ով հանրային պաշտպաններին աջակցել է մի շարք հարցերով:

Նույն գրասենյակի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում հանրային պաշտպանների համար կազմակերպվել է արտագնա վերապատրաստման աշխատաժողով: Դասընթացները մասնավորապես առնչվել են ապաստանի և դրան առնչվող վարույթներում իրավունքների պաշտպանության հարցերին:

Նշված համագործակցության, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» բարեգործական կազմակերպության հետ համատեղ ապաստանի ոլորտում իրավաբանական ծառայություններ մատուցողների համար «Փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգում ծագման երկրի տեղեկության դերի մասին» թեմայով իրականացվել են սեմինար քննարկումներ:

Այնուհետև, նույն ծրագրի շրջանակներում արտագնա աշխատաժողով է անցկացվել նաև քրեաիրավական ոլորտի մասնագիտացում ունեցող հանրային պաշտպանների համար: Վերը նշված աշխատաժողովի ընթացքում ի թիվս այլնի, քննարկվել են ապաստանի և դրան առնչվող վարույթներում իրավունքների պաշտպանության առանցքային հարցերը, աշխատաժողովի աշխատանքներին ներգրավվել է նաև հոգեբան, անդրադարձ է կատարվել շահառուների հետ հաղորդակցության հմտություններին և բարդություններին: ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հայաստանյան ներկայացուցչության հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակներում 2023 և 2024 թվականների ընթացքում կազմակերպվել են մի շարք դասընթացներ, այդ թվում՝ իրականացվել է աշխատաժողով Աղվերանում՝ Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի ներկայացուցչության (UNHCR կամ ՄԱԿ ՓԳՀ) հետ համագործակցությամբ իրականացվող «Իրավաբանական աջակցություն բռնի տեղահանված անձանց» ծրագրի շրջանակներում: Ծաղկաձորում տեղի է ունեցել աշխատաժողով հանրային պաշտպանների և ՄԱԿ –ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հետ իրականացվող ծրագրի փաստաբանների համար: Բյուրականում տեղի է ունեցել աշխատաժողով, որի ընթացքում քննարկվել են ապաստանի իրավունքի միջազգային և ներպետական հիմնական չափանիշներն ու սկզբունքները, ապաստանի վարույթը, ընթացակարգային առանձնահատկությունները, բողոքարկումը և այլ հարցեր: Աղվերանում աշխատաժողով է կազմակերպվել մարզերը սպասարկող

քրեաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանների համար՝ ապաստանը և քրեական վարույթը թեմայով:

Հարկ է ընդգծել նաև, որ տարբեր ժամանակներում տարբեր ծրագրերով հանրային պաշտպանները, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը և տեղակալները մասնակցել են աշխատաժողովների, առցանց դասընթացների, արտագնա սեմինար-քննարկումների՝ վերապատրաստումների շրջանակում, այդ թվում ՝ HELP «Փախստական և միգրանտ» երեխաները առցանց դասընթացին, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից կազմակերպված աշխատաժողովին «Մարդու սոցիալական իրավունքների ամրապնդումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում իրականացվող Եվրոպական սոցիալական խարտիայի կոնվերցիոն համակարգի և զեկույցների մեխանիզմների վերաբերյալ:

Հանրային պաշտպանի գրասենյակի քրեական ուղղվածության փաստաբանները մասնակցել են Ամերիկյան իրավաբանների ընկերակցության իրավունքի գերակայության նախաձեռնության (ABA ROLI) կողմից կազմակերպված աշխատաժողովին, որի նպատակ է եղել՝ ներկայացնել ABA ROLI–ի ղեկավարությամբ իրականացվող հետազոտությունը մարդու իրավունքների ազգային ինստիտուտների դերի, նրանց և քաղաքացիական հասարակության ու անհատների հետ համագործակցության վերաբերյալ՝ մարդու իրավունքների խախտումների գործերով արդարադատության հասնելու գործընթացում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Հարութ Ակլունցը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը 2023 թվականի դեկտեմբերի 1-ին և 2-ին մասնակցել են Թբիլիսիում անցկացված «Օրենքի գերակայության և արդարադատության հասանելիության բարելավում բոլորի համար» խորագրով տարածաշրջանային համաժողովին:

Համաժողովի պանելային քննարկումների ընթացքում բանախոսությամբ հանդես է եկել նաև Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հանրային պաշտպանության համակարգը, Ադրբեջանի իշխանությունների կողմից կազմակերպված արցախցիների հարկադիր տեղահանման արդյունքում ստեղծված իրավիճակը, տեղահանված անձանց տրամադրվող իրավաբանական օգնության ընթացքը և կարիքները, Հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման տեսլականը:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության (ԹՊԻՀ) գրասենյակի հետ համագործակցության արդյունքում հնարավոր է դարձել Հանրային պաշտպանների և «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվող նրանց վստահորդների միջև առցանց տեսակապի ապահովումը: Հատկանշական է, որ ծրագրի առանցքային սկզբունքներից է ապահովել տեսակցությունների և փոխանցվող տեղեկատվության գաղտնիության բարձր երաշխիքները, կարևոր

պայման է նաև հաղորդակցության այս եղանակից օգտվելու փաստաբան-վստահորդ երկուստեք կամահայտնությունը:

Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածության հարցը իրավասու պետական մարմիններին ներկայացնելուն զուգահեռ, այն ներկայացվել է նաև ՀՊԳ կարողությունները զարգացնելու հարցում շահագրգիռ և ՀՊԳ հետ համագործակցող հասարակական կազմակերպություններին՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցով օժանդակ գործիքներով առկա իրավիճակը մեղմելու համար:

Պալատը շարունակել է միջոցներ ձեռնարկել ՀՊԳ ծանրաբեռնվածության խնդիրը այլընտրանքային լուծումներով մեղմելու ուղղությամբ:

Գործընկերների հետ համագործակցությամբ շարունակվել է «Իրավունքների պաշտպանության նախաձեռնություն» հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որի շրջանակներում 8 ամիս շարունակ երկու փաստաբան, անվճար իրավաբանական օգնություն են ցուցաբերել ՀՊԳ շահառուներին՝ այդպիսով թոթափելով գրասենյակի և հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունը:

Գերծանրաբեռնվածությունը թոթափելու ուղղությամբ ՀՀ փաստաբանների պալատի ձեռնարկած միջոցների, արդարադատության ոլորտում լիազոր պետական մարմնի ներկայացուցիչների հետ կայացած հանդիպումների և քննարկումների արդյունքում 2024 թվականի երկրորդ կիսամյակից հետո Գրասենյակին հատկացվել է 15 լրացուցիչ հաստիք: Նշված հաստիքների ավելացմամբ թեև չի լուծվել հանրային պաշտպանների գերծանրաբեռնվածության հարցը, այնուամենայնիվ յուրաքանչյուր հանրային պաշտպանին ընկնող գործերի աճի քանակը մեղմվել է:

2024 թվականին առավել ակնառու է դարձել նաև հանրային պաշտպանների աշխատավարձի խնդիրը, քանի որ օրենսդրորեն դրա չափը, թեպետ հավասարեցված է Երևան քաղաքի ավագ դատախազի աշխատավարձի դրույքաչափին, սակայն փաստացի, գրեթե կրկնակի զիջում է նշված պաշտոնին նշանակված անձանց վարձատրության չափին, քանի որ վերջիններիս, ի տարբերություն հանրային պաշտպանների վճարվում են նաև հավելավճարներ: Օրենսդրական փոփոխությունների արդյունքում, «Փաստաբանության մասին» օրենքով, սահմանվեց հանրային պաշտպանների արտաժամյա աշխատանքի դիմաց վճարման կարգավորումը, որը որոշ չափով մեղմեց խնդիրը:

VII. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԵՐԴՐՈՒՄ

Ժամանակակից իրավունքի զարգացման միտումները վկայում են այն մասին, որ մասնագիտական աջակցության կարիք են ունենում նաև փաստաբանները: Տվյալ ծրագիրը միտված է տարբեր միջոցառումներ կազմակերպելու եղանակով հիշյալ շրջանակի անձանց համար փորձի փոխանակման հարթակ ստեղծելուն:

Այս ծրագրի շրջանակներում ՀՀ փաստաբանների պալատում կազմակերպվել և անց են կացվել մի շարք հանդիպում-քննարկումներ, որոնց մասնակցել են փորձառու մասնագետներ: Հանդիպումների ընթացքում քննարկվել են թեմատիկ տարաբնույթ իրավական հարցեր: ՀՀ փաստաբանների պալատում տեղի են ունեցել քննարկումներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ Արմեն Հարությունյանի և Թիմ Էյքի, ԵԱՏՄ դատավոր Արմեն Թումանյանի, Մոսկվայի, Բեռլինի փաստաբանների պալատների փաստաբան, Ռուսաստանի փաստաբանների գիլդիայի նախագահի տեղակալ, Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի պրոֆեսոր (Մոսկվա), ի.գ.թ. Ռուբեն Մարգարյանի և Անգլիայի և Ուելսի բարձրագույն դատարանների փաստաբան, Լոնդոնի արբիտրների թագավորական ինստիտուտի (CIArb) անդամ, Հաագայի առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի (ICCA) անդամ, Լոնդոնի խորհրդի անդամ, Լոնդոնի ծովային արբիտրների ասոցիացիայի (LMAA) անդամ Նորայր Բաբաջանյանի մասնակցությամբ:

Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ու անդամ կառույցների հետ համագործակցության շրջանակներում երիտասարդ փաստաբանները մասնակցել են տարբեր օնլայն միջոցառումների, այդ թվում՝ տարեկան ընդհանուր ժողովին:

Իրականացվել են անվճար աշխատասենյակի մասին հայտարարությունների հրապարակում, հայտերի քննարկում, շահառուների ցուցակների հաստատում, ընթացքում նաև՝ լրացումներ:

Երիտասարդական խորհուրդը կազմակերպել է երիտասարդ փաստաբանների և փորձառու իրավաբանների, փաստաբանների միջև հանդիպում-քննարկումներ: Այս շրջանակներում մասնակցություն է ապահովվել Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպված առցանց միջոցառումներին, Միջազգային առևտրային պալատի Հայաստանյան ազգային կոմիտեի և «Արբիտրաժ» ՍՊԸ-ին կից մշտապես գործող Արբիտրաժային դատարանի կողմից կազմակերպված կոնֆերանսին:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել ակումբի նիստ, որի ընթացքում քննարկվել է «Ապօրինի ծագում ունեցող գույքի

բռնագանձման մասին» ՀՀ օրենքի խնդիրները և իրավակիրառ պրակտիկան: Նիստի ընթացքում փաստաբանները ներկայացրել են իրենց վարույթում առկա գործերի խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործողություններ կատարելու հնարավոր մարտավարությունները:

2023 թվականի հունիսի 13-ին ՀՀ փաստաբանների պալատ է այցելել Իտալիայի Տուշիայի համալսարանի ԵՄ իրավունքի պրոֆեսոր, Լուվենի կաթոլիկ համալսարանի գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի օգնական Ֆրանչեսկո Լուիջի Գատտան: Հանդիպման ընթացքում քննարկել են ՄԻԵԴ դիմելու ընթացակարգերը, ինչպես նաև առկա գործերը:

ՀՀ փաստաբանների պալատը, հաշվի առնելով Արցախից տեղահանված գործընկերներին մասնագիտական աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունը, 2023 թվականի նոյեմբեր-դեկտեմբերի ամիսներին Արցախի Հանրապետության փաստաբանների համար կազմակերպել է 20-ից ավելի վերապատրաստման դասընթացներ:

2024 թվականի օգոստոսի 24-ին Նովոսիբիրսկի շրջանի Փաստաբանների պալատի հրավերով Փաստաբանների պալատի Երիտասարդական խորհրդի աջակցությամբ երիտասարդ փաստաբանները հնարավորություն են ստացել մասնակցել «Երիտասարդ փաստաբանների իրավաբանական ֆորումնին»:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի ու անդամ կառույցների հետ համագործակցությունը, որի շրջանակներում երիտասարդ փաստաբանները մասնակցել են տարբեր առցանց միջոցառումների, այդ թվում՝ տարեկան ընդհանուր ժողովին:

Ապահովվել է երկու երիտասարդ փաստաբանի մասնակցությունը Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից կազմակերպվող՝ Մենթորության ծրագրին, որի ընթացքում հնարավորություն է տրվել հաղորդակցվել այլ երկրի փորձառու իրավաբանի հետ և ստանալ խորհրդատվություն:

VIII. ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ (PRO BONO) ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՎՃԱՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ փաստաբանների պալատի կողմից կատարվել են ծավալուն աշխատանքներ անվճար իրավաբանական օգնության ծավալներն ավելացնելու համար արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ:

Մասնավորապես, ի կատարումն վերը նշված նպատակի՝ ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ բազմաձավալ աշխատանքներ է կատարել օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:

«Փաստաբանության մասին» օրենքում կատարված փոփոխություններով ներդրվել է կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակ վարելու, կատարված աշխատանքի վերաբերյալ վերջիններիս կողմից հաշվետվություն ներկայացնելու, նրանց նկատմամբ **խրախուսման միջոցներ** կիրառելու, ինչպես նաև մի շարք այլ կառուցակարգեր: Նշված փոփոխության արդյունքում Պալատի ներքին իրավական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ:

2024 թվականին կատարվել է հրապարակում 2023 թվականի ընթացքում կամավոր անհատույց իրավաբանական օգնություն տրամադրած (ծրագրեր իրականացրած) փաստաբանների և փաստաբանական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ցուցակում ընդգրկվելու համար հաշվետվություն ներկայացնելու ժամկետների վերաբերյալ: Ստացվել են անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու վերաբերյալ հաշվետվությունները, ուսումնասիրվել են հիմքերը, անվճար իրավաբանական օգնություն տրամադրած փաստաբանների նկատմամբ կիրառվեն են խրախուսման միջոցներ:

Սակայն, անվճար իրավաբանական օգնության տրամադրման շուրջ ձևավորված իրավիճակը կտրուկ փոխվել է, երբ 2024 թվականին, պետությունն այս ուղղությամբ սկսել վարել նախկինից խիստ տարբերվող և աշխարհում նախադեպը չունեցող հարկային քաղաքականություն:

Մասնավորապես՝ շրջանառության մեջ է դրվել և ընդունվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-285-Ն ՀՀ օրենքը, որով նախատեսվում էր 2025 թվականի հունվարի 1-ից հարկման ենթարկել անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Պալատը հավատարիմ մնալով իր գաղափարներին, հաշվետու ողջ ժամանակահատվածում կատարելով բոլոր հնարավոր քայլերը ներպետական և միջազգային հարթակներում, պայքարել է նշված օրենքի ընդունումը կանխելու, իսկ դրա ընդունումից հետո՝ դրույթների Հայաստանի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանությունը վիճարկելու ուղղությամբ[2]:

IX. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՈՉ ՖՈՐՄԱԼ ՇՓՈՒՄՆԵՐԻՆ ՆՊԱՍՏՈՂ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

ՀՀ փաստաբանների պալատը կարևորում է փաստաբանների միջև ոչ ֆորմալ շփումը, քանի որ դա առանցքային նշանակություն ունի փաստաբանների

[2] *Մանրամասները տե՛ս «Խնդրահարույց օրենսդրական նախաձեռնությունների դեմ պայքարը» ենթագլխում*

միասնականության ամրապնդման և միմյանց հանդեպ հարգանքի ձևավորման համար:

Այդ նպատակով, ՀՀ փաստաբանների պալատը, նշված ժամանակահատվածում բազմաթիվ անգամ կազմակերպել և անց է կացրել վոլեյբոլի, շախմատի, ֆուտբոլի մրցաշարեր, մերձամարտի, ձեռնամարտի և մարտարվեստի սեմինար-մարզումներ, այլ ինտելեկտուալ խաղեր:

Փաստաբանները մասնակցել են բիլիարդի միջազգային մրցաշարին, որը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍ նախաձեռնությամբ:

Յուրաքանչյուր տարի կազմակերպվել և անց են կացվել միջոցառումներ Երեխաների միջազգային օրվա և Ամանորի կապակցությամբ:

Փաստաբանների պալատի մամուլի ծառայությունը մեկնարկել է բլից հարցազրույցների շարքը, որոնք հրապարակվել են ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում:

X. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԽԹԱՆՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կարևորում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացումը:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են մի շարք այցեր փաստաբանական գրասենյակներ, պատրաստվել են այդ մասին պատմող հոլովակներ, փաստաբանների պալատի կայքէջում, ֆեյսբուքյան և յութուբյան էջում տեղադրվել են հոլովակներ այցերի վերաբերյալ:

Բացի այդ, հարկ է նշել, որ Փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում առկա է «Գրասենյակներ» բաժինը, որտեղ մշտապես թարմացվում են փաստաբանական գրասենյակների տվյալները: Այս գործիքը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր քաղաքացու արագ ծանոթանալ Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող գրասենյակների ցանկին և կապ հաստատել ցանկալի գրասենյակի հետ, ինչը նպաստում է փաստաբանական գործունեության իրականացման գրասենյակային մշակույթի զարգացմանը:

XI. ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆԸ ՆՊԱՍՏՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը կարևորում է ժամանակակից տեխնոլոգիաների և գործիքակազմերի կիրառումը փաստաբանական գործունեության կազմակերպման գործընթացում:

Այս շրջանակներում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը ներպետական և միջազգային գործընկերների հետ քննարկել է էլեկտրոնային արդարադատության համակարգի մշակման և ներդրման հետ կապված մի շարք առանցքային հարցեր:

Ձեռնարկվել են միջոցներ Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատանքի կազմակերպման համար նախատեսված էլեկտրոնային հանրային պաշտպանի գրասենյակի տեղեկատվական համակարգի *(այսուհետ՝ նաև Էլեկտրոնային համակարգ)* թարմացման ուղղությամբ:

Բացի այդ, Հայաստանում ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների և իրավապահ համագործակցության («ԹՊԻՀ», «INL») գրասենյակի աջակցության շնորհիվ ներդրվել է Հանրային պաշտպանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը թեթևացնելուն ուղղված ծրագիր, որի շնորհիվ հանրային պաշտպաններն առանց լրացուցիչ ժամանակ և ռեսուրսներ օգտագործելու, գաղտնիության պայմանների պահպանմամբ տեսակապի միջոցով կարողանում են

տեսակցել ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում գտնվող իրենց վստահորդի հետ:

Հաշվի առնելով դատավարական համակարգում տեղի ունեցող էական փոփոխությունները և դրանց կիրառման համար փաստաբանների կարողությունները զարգացնելու, էլեկտրոնային գործիքակազմերի գործնականում ճիշտ կիրառմանը նպաստելու անհրաժեշտությունը, 2024 թվականի հունվարի 25-ից մեկնարկել են նշված թեմայով մեծաքանակ վերապատրաստման դասընթացները:

2024 թվականի հուլիսի 27-ին և 28-ին, դեկտեմբերի 7-ին և 8-ին Փաստաբանների պալատը՝ ՄԱԿ զարգացման ծրագրերի հայաստանյան գրասենյակի (UNDP) հետ համագործակցությամբ՝ Արցախից տեղահանված և Հայաստանում հավատարմագրված փաստաբանների, Շիրակի մարզի, այնուհետև Տավուշի մարզի փաստաբանների համար կազմակերպել է երկօրյա աշխատաժողովներ, որոնց ընթացքում քննարկվել են մի շարք թեմաներ, այդ թվում՝ «Փաստաբանական գործունեությանն առնչվող էլեկտրոնային ռեսուրսներ»-ը:

2024 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում էլեկտրոնային եղանակով իրականացվող դատավարական և այլ գործողությունների առանձնահատկությունները նախատեսող գլուխն իր համապատասխան կարգավորումներով: Հաշվի առնելով դատավարական համակարգում տեղի ունեցող էական փոփոխությունները և դրանց կիրառման համար փաստաբանների կարողությունները զարգացնելու, էլեկտրոնային գործիքակազմերի գործնականում ճիշտ կիրառմանը նպաստելու անհրաժեշտությունը, 2024 թվականի հունվարի 25-ից մեկնարկել են նշված թեմայով մեծաքանակ վերապատրաստման դասընթացները: Վերապատրաստման դասընթացները վարել են ծրագրի հեղինակ Masys Information Systems կազմակերպության ներկայացուցիչներիը, ինչպես նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանը: Դասընթացները տեղի են ունեցել զուգահեռաբար հեռավար ձևաչափով, որպեսզի դասընթացներին մասնակցելու հնարավորություն ունենան մարզաբնակ փաստաբանները: Քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի գործարկմամբ պայմանավորված դատավարական փաստաթղթերը անհրաժեշտ էր ներկայացնել էլեկտրոնային ստորագրման եղանակով, ինչի համար անհրաժեշտ էր նույնականացման (ID) քարտ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ որոշ գործընկերներ չունեին նույնականացման քարտ և սուղ ժամկետների պատճառով կարող էին խնդրի առաջ կանգնել համակարգից օգտվելիս, Պալատը պետական մարմինների հետ պայմանավորվածություն ձեռք բերեց՝ նույնականացման քարտ ստանալու համար

փաստաբանների անձնագրային բաժանմունքում արտահերթ դիմումներ ներկայացնելու հնարավորություն ընձեռելու վերաբերյալ: Համակարգի գործարկումից հետո, վերհանվել են նշված համակարգի հետ կապված խնդիրները, հավաքագրվել և ուղարկվել են Արդարադատության նախարարություն և Masys Information Systems կազմակերպություն: Պալատը նաև օժանդակել է էլեկտրոնային քաղաքացիական դատավարության համակարգում փաստաբանների գրանցմանը:

Բացի այդ, Փաստաբանների պալատում, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավար կազմի ներկայացուցիչները՝ փաստաբաններին ներկայացնել են Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային համակարգի հնարավորությունները:

XII. ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Յուրաքանչյուր ամսվա վերջում Փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվում և փաստաբաններին էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվում է հաջորդ ամսվա համար փաստաբանների վերապատրաստման դասընթացների ժամանակացույցը:

Հարկ է ընդգծել, որ փաստաբանների վերապատրաստման համար հաստատված թեմաների գերակշիռ մասն ընտրվում են հենց փաստաբանների կողմից ներկայացված առաջարկներից:

Բոլոր դասընթացներն անց են կացվել առկա, հեռավար կամ առկա-հեռավար տարբերակներով:

2022 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 110 անվճար դասընթաց:**

2022 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունները փաստաբանների համար կազմակերպել են շուրջ **8 վերապատրաստման դասընթաց:**

2023 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 195 անվճար դասընթաց:**

ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է 16 վերապատրաստման դասընթաց:

2024 թվականի ընթացքում, ընդհանուր առմամբ, տեղի է ունեցել **վերապատրաստման 245 անվճար դասընթաց**:

ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է 20 վերապատրաստման դասընթաց՝ առկա և հեռավար տարբերակով:

2024 թվականին Փաստաբանների պալատի կողմից հավատարմագրված կազմակերպությունների կողմից փաստաբանների համար կազմակերպվել է շուրջ 12 վերապատրաստման դասընթաց:

2025 թվականին (հուլիսի 31-ը) ներառյալ՝ տեղի է ունեցել **վերապատրաստման 99 անվճար դասընթաց**:

ՀՀ փաստաբանների պալատը ՀՀ փաստաբանական ակադեմիայի հետ համատեղ կազմակերպել է 14 վերապատրաստման դասընթաց:

Փաստաբանները մասնակցել են HELP դասընթացներին, Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի կողմից կազմակերպված աշխատաժողովներին:

ՀՀ փաստաբանների պալատի և Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ համատեղ կազմակերպվել են «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգիրք», «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա», «Փաստաբանների մարտահրավերները կոռուպցիայի դեմ պայքարում» թեմայով վերապատարստումները:

2022 թվականին տեղի են ունեցել վերը նշված թեմաներով 10-ից ավել վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են շուրջ 400 փաստաբան:

2024 թվականին կազմակերպվել են 20-ից ավել հեռավար դասընթացներ միայն ՀՀ մարզի փաստաբանների համար: Առցանց հարթակում տեղադրվել է 1 նոր վերապատրաստման տեսադաս:

ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում Արցախի փաստաբանների, ինչպես նաև

ՀՀ մարզերի փաստաբանների համար կազմակերպվել են թվով 15 երկօրյա վերապատրաստման դասընթացներ: Դասընթացների մասնակիցներն ապահովվել են գիշերակացով և սնունդով՝ հնարավորություն տալով ամբողջությամբ ներգրավված լինել դասընթացներին: Դասընթացները վարել են տվյալ ոլորտի լավագույն մասնագետները: Վերապատրաստման դասընթացներին ընդհանուր առմամբ մասնակցել է 165 փաստաբան:

ՀՀ փաստաբանական ակադեմիայի գործունեությունը.

- ✓ 2022 թվականից մինչ 2024թ. աշնանային հոսքի ընդունելությունը Փաստաբանական ակադեմիան ունեցել է 1212 դիմորդ, նշված ժամանակահատվածում Փաստաբանական ակադեմիան ավարտել և հավաստագիր է ստացել 445 ունկնդիր:
- ✓ Փաստաբանական ակադեմիայի նախաձեռնությամբ, 10 իրավաբան-համահեղինակների համատեղ գիտական գործունեության արդյունքում լույս է տեսել և իրավաբանական համայնքին ներկայացվել «Փաստաբանությունը ՀՀ-ում» ուսումնական ձեռնարկը:
- ✓ Կատարվել է Փաստաբանական ակադեմիայի լսարանների արդիականացում՝ այդ թվում համալրում նոր համակարգիչներով, գրասենյակային կահույքով, նյութատեխնիկական միջոցներով և այլն:
- ✓ Թարմացվել և արդիականացվել է նաև Փաստաբանական ակադեմիայի ուսումնական գործընթացը, ներառվել են նոր դասընթացներ, դասախոսական կազմը համալրվել է նոր պրոֆեսիոնալ դասախոսներով
- ✓ Ներդրվել է փորձաշրջանի փուլում ունկնդիրների գնահատման և ինքնագնահատման մոդել:
- ✓ ՀՀ փաստաբանական ակադեմիայում բացվել է Ռուբեն Սահակյանի անվան լսարանը:



XIII. ՏԱՐԵՑ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ XIV. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Փաստաբանների պալատը մշտապես աջակցել է սոցիալական աջակցության կարիք ունեցող փաստաբաններին:

Նման աջակցության կարիք ունեն հատկապես տարեց փաստաբանները, ում ցուցաբերված աջակցությունը դրսևորվել է հետևյալ կերպ՝

1. 63 տարին լրացած և փաստաբանական գործունեությամբ չզբաղվող ավելի քան 300 փաստաբան ազատվել է **վերապատրաստմանը մասնակցելու պարտավորությունից:**

2. Անդամավճար վճարելու պարտավորությունից ազատվել է 70 տարին լրացած շուրջ 300 փաստաբան:

Բացի այդ, **«Փաստաբան եզեգելյան օժանդակություն»** ծրագրի շրջանակներում, այդ թվում՝ տարեց փաստաբաններին հանձնվել են մեկ տարվա անդամավճարի վճարման վերաբերյալ հավաստագրեր:

XIV. ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Պալատի ներկայացուցիչները մշտապես մասնակցել են երկրում տեղի ունեցող իրավական գործընթացներին:

2022-2025 թվականներին Պալատ է մուտքագրվել թվով 50 օրենսդրական նախագիծ, որոնց վերաբերյալ Պալատը ներկայացրել է կարծիքներ, դիրքորոշումներ և առաջարկություններ, որոնք իրենց շոշափելի ազդեցությունն են ունեցել իրավական ակտերի մշակման վրա:

Պալատի ներկայացուցիչները մասնակցել են քննարկումների տարբեր պետական կառույցների հետ:

2022 թվականին, մինչև «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2022 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՕ-366-Ն օրենքի ընդունումը կազմակերպվել և անց են կացվել մի շարք քննարկումներ Արդարադատության նախարարության, օրենսդիր մարմնի ներկայացուցիչների, «Օրենսդրության զարգացման կենտրոն» հիմնադրամի ներկայացուցիչների և նշված օրենքի նախագիծը մշակող փորձագետների մասնակցությամբ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ղեկավարած աշխատախումբը հանդիպում-քննարկում է ունեցել ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի և Կոմիտեի իրավասու պաշտոնատար անձանց հետ՝ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծի վերաբերյալ:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը մասնակցել է ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպված կլանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման ինստիտուտի արժեզրկման, դատական գործերի «ձեռքով» մակագրման կարգի խախտումների և դրանց վերացման վերաբերյալ օրակարգային հարցերով աշխատանքային քննարկմանը:

ՀՀ ՔՊ նախագահի առաջին տեղակալը մասնակցել է ՀՀ ՊՆ վարչական համալիրում անցկացված զորամիավորումների, զորամասերի և ռազմաուսումնական հաստատությունների սպա-իրավաբանների մասնագիտական հավաքին և հանդես է եկել իրավահասկացողության տիպաբանության համատեքստում՝ իրավունքի և օրենքի հարաբերակցությանը նվիրված զեկույցով:

2024 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը և նախագահի տեղակալը ներկա են գտնվել «Մարդու իրավունքների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի մեկնարկն ազդարարող հանդիսավոր արարողությանը: Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդես է եկել ելույթով, որում առանձնակի կարևորել է ծրագրի նպատակները՝ ընդգծելով մասնավորապես Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդմանն ուղղված ջանքերի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև քաղաքացիներին որակյալ անվճար իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների ու կարողությունների զարգացումը:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը հանդիպում է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի հետ:

Հանդիպմանը ներկա են եղել ներկայացուցիչներ Փաստաբանների պալատից և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից: Հանդիպման ընթացքում կարևորվել է երկու կառույցների միջև կնքված համագործակցության հուշագրի նշանակությունը և երկարամյա սերտ համագործակցության պատմությունը: Քննարկվել են Արցախից բռնի տեղահանված փաստաբանների և քաղաքացիների իրավական խնդիրների լուծմանն աջակցելու, խոշտանգումների և այլ վատ վերաբերմունքի դրսևորումները կանխարգելելուն ուղղված գործողությունների համակարգման, փաստաբանների մասնագիտական գործունեությանը խոչընդոտումների դեմ գործակցելու, ինչպես նաև իրավաբանական օգնության նկատմամբ կիրառվող հարկային բեռի ավելացմանն առնչվող և ոլորտային մի շարք այլ կարևոր հարցեր:

ՀՀ փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվող վիճարկման հայցը վարույթ ընդունելու խնդրահարույց դրույթների վերաբերյալ:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ դատական դեպարտամենտի, ՓՄԶ ասոցացիայի, ինչպես նաև գիտական հանրույթի և հասարակական կազմակերպությունների այլ ներկայացուցիչներ:

XV. ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԵՎ

ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում հանրային իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ Փաստաբանների պալատը իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք ամփոփ ներկայացված են ստորև:

- 2022 թվականին մեկնարկել է «Փաստաբանի խորհրդով» հաղորդաշարը: 2023 թվականի հոկտեմբերի 15-ից հաղորդաշարը նկարահանվել և հեռարձակվել է «Հ2» հեռուստաալիքի եթերում: Հանրության իրավագիտակցության բարձրացմանը և իրավական մշակույթի զարգացմանը նպաստելու նպատակով ստեղծված հաղորդաշարը տարածում է ստացել նաև «Հ2» Հ/Ը-ի Յութուբյան ալիքում, ստեղծվել են «Փաստաբանի խորհրդով հաղորդաշար» Ֆեյսբուք և Տիկ-Տոկ սոցիալական ցանցերի էջեր: Սոցիալական հարթակների միջոցով հաղորդաշարին լայն տարածում ապահովելու և հանրությանն ավելի հասանելի դարձնելու նպատակով թողարկումները նաև գովազդվում են: Նկարահանվել և հեռարձակվել է ավելի քան 80 հաղորդում:
- Անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվել բերման ենթարկված ցույցերի մասնակիցներին, ինչի համար ստեղծվել են արագ արձագանքման խմբեր:
- Յուրաքանչյուր տարի անվճար իրավաբանական օգնություն է տրամադրվել կանանց:
- Դպրոցականների և ուսանողների համար ճանաչողական այցեր են իրականացվել Փաստաբանների պալատ:
- Հանրային պաշտպանի գրասենյակի վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակներում իրականացվել է հաղորդակցության արշավ, որի շրջանակներում նկարահանվել է կարճ տեղեկատվական անիմացիոն հոլովակ, որը տարածվել է տեղեկատվական տարբեր հարթակներում ընդգրկելով լայն լսարան: Բացի անիմացիոն հոլովակից, կազմվել են նաև Հանրային պաշտպանի գրասենյակին առնչվող իրազեկման նյութեր, որոնք ևս տարածվել են տեղեկետվական տարբեր հարթակներում:

Իրազեկման տեղեկատվության հասանելիությունը մեծացնելու նպատակով ծրագրի շրջանակներում ստեղծվել և լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերում տարածվել են անվճար իրավաբանական օգնության և Հանրային պաշտպանի գրասենյակի գործունեությունը լուսաբանող տեսանյութեր: Պատրաստվել և շրջանառության մեջ է դրվել նաև Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից 2022 թվականին վարած գործերի քանակը, դրանցով արձանագրված արդյունքները ներկայացնող անիմացիոն տեսանյութ: Ծրագրի շրջանակներում նաև իրականացվել է սոցիոլոգիական ուսումնասիրություն՝ պարզելու անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ հանրային ընկալումը Հայաստանի երկու պիլոտային մարզում, որի նպատակն է բարելավել անվճար

իրավաբանական օգնության մեխանիզմների փորձը: Ուսումնասիրությունն իրականացվել է Սյունիքի և Տավուշի մարզերում:

Կատարված ուսումնասիրության արդյունքներով «ՍԻՎԻՏՏԱ ԷՅԵՄ» ընկերության, «ՀՌԿԿ-Հայաստան» հիմնադրամի և փորձագիտական խմբի կողմից մշակվել և ՀՀ փաստաբանների պալատին է ներկայացվել զեկույց՝ հայերեն և անգլերեն լեզուներով:

XVI. ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆ

Փաստաբանների պալատը կյանքի է կոչել բազմաթիվ նախաձեռնություններ և իրականացրել է մի շարք միջոցառումներ, որոնք նպաստել են միջհամայնքային կապերի զարգացմանը:

- ***Փաստաբանների պալատի ներկայացուցիչները մասնակցել են ներպետական և միջազգային կառույցների կողմից կազմակերպված բազմաթիվ քննարկումների, վեբիներների, նիստերի, հանդիպումների, այդ թվում՝ արտերկրում:***

- 2021 թվականի հոկտեմբերի 12-ին և 13-ին ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները մասնակցել են Ռուսաստանի Դաշնության փաստաբանների ֆեդրալ պալատի կողմից կազմակերպված «Փաստաբանություն. Պետություն. Հասարակություն» խորագրով կոնֆերանսին, հանդես եկել ելույթով:
- Պալատը, մշտական ներկայացուցչի միջոցով, ակտիվ մասնակցել է Եվրոպայի փաստաբանների և փաստաբանների միությունների կազմակերպության PECO կոմիտեի աշխատանքներին, հանդես եկել զեկույցներով:
- Պալատը մշտապես մասնակցել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի (Europian Union and Council of Europe) կողմից կազմակերպվող քննարկումներին և աշխատաժողովներին, աջակցություն ցուցաբերել ծրագրերի իրականացմանը:
- Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE)/ABA վերբինարին:
- 2022 թվականի մարտի 9-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստերին:
- 2022 թվականի հուլիսի 16-ին Պալատը ներկայացուցիչները մասնակցել են Փաստաբանների միջազգային միության (UIA) կողմից կազմակերպված առցանց վեբինարին, իսկ 2023 թվականի փետրվարի 6-ին UIACoffee-Chat-ին:
- 2022 թվականի հոկտեմբերի 6-ին Պալատի ներկայացուցիչները զեկույցով մասնակցել են «Փոխանակման, համագործակցության և իրազեկման հարթակ» (PECO) կոմիտեի կողմից կազմակերպված առցանց նիստին, որտեղ քննարկվել է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի փոփոխության նախագիծը, ինչի արդյունքում փաստաբաններին տրամադրվող տեղեկատվությունը նախատեսվում էր սահմանափակել: Հետագայում նշված նախագիծը հանվեց շրջանառությունից:
- 2022 թվականի նոյեմբերի 04-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահը Ուզբեկստանի Փաստաբանների պալատի նախագահ Ալիմ Էրնազարովի հրավերով մասնակցել է «Փաստաբանության զարգացման հեռանկարները. Ուզբեկստանի և արտասահմանյան երկրների փորձը» խորագրով միջազգային համաժողովին: ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը համաժողովի շրջանակներում հանդես է եկել ելույթով:
- 2023 թվականի փետրվարի 16-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ Արտաքին գործերի նախարարության և Եվրոպայի Խորհուրդ համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված «Եվրոպայի Խորհուրդ/Հայաստան 2023-2026 թվականների Գործողությունների» ծրագրի

պաշտոնական մեկնարկին նվիրված արարողությանը:

- 2023 թվականի փետրվարի 27-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը Ֆրանսիայի Ստրասբուրգ քաղաքում մասնակցել են Եվրոպայի խորհրդի գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2022թթ տարածաշրջանային «Իրավաբանի մասնագիտության հզորացում՝ եվրոպական ստանդարտներին համապատասխան» թեմայով տեղի ունեցած քննարկումներին:
- 2023 թվականի ապրիլի 7-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Ռուսաստանի Դաշնության փաստաբանների պալատից կողմից կազմակերպված «Իրավաբանների բիզնեսի կառավարման ժամանակակից հիմնախնդիրները» թեմայով առցանց կոնֆերանսին:
- 2023 թվականի ապրիլի 19-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Շվեդիայի ազգային դատարանի աշխատակազմի և Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի հետ համատեղ կազմակերպված մեդիա խորհրդատվական ֆորումին:
- 2023 թվականի մայիսի 11-ից 13-ը Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարար Կ. Ա. Չուիչենկոյի և ՌԴ փաստաբանների ֆեդերալ պալատի նախագահ Ս. Ի. Վոլոդինայի հրավերով, աշխատանքային այցով գտնվել են Ռուսաստանի Դաշնությունում՝ մասնակցելու Սանկտ Պետերբուրգում կայացած միջազգային իրավական ֆորումին:
- 2023 թվականի մայիսի 17-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Երևանում տեղի ունեցած Սանկտ-Պետերբուրգի Փաստաբանների պալատի, «Սանկտ-Պետերբուրգի փաստաբանության ինստիտուտ»-ի և «Լիգալ Ֆորտ» փաստաբանների կոլեգիայի կողմից կազմակերպված երկրորդ միջազգային համաժողովին:
- 2023 թվականի մայիսի 19-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են «Ռուսաստանի Դաշնությունում փաստաբանության մասին» դաշնային օրենքի ընդունման օրվան նվիրված կլոր սեղան-քննարկմանն առցանց եղանակով:
- 2023 թվականի հոկտեմբերի 17-ից 29-ը Պալատի ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից կազմակերպված Հայ իրավաբանների համագումարին:
- 2023 թվականի նոյեմբերի 15-ից 19-ը Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Ֆրանսիայի Օ դը Սեն քաղաքի փաստաբանների պալատի նախագահ Իզաբել Կլանե Դի Լամանիի կողմից կազմակերպված Օ դը Սենի փաստաբանների պալատի ամենամյա ամփոփիչ միջոցառմանը:
- 2023 թվականի դեկտեմբերի 1-ից 2-ը Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Թբիլիսիում անցկացված «Օրենքի գերակայության և արդարադատության հասանելիության բարելավում բոլորի համար» խորագրով

տարածաշրջանային համաժողովին:

- ՀՀ ՓՊ Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը Փաստաբանների միջազգային միության (UIA) հրավերով 2024 թվականի հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 03-ը մասնակցել է Փարիզում տեղի ունեցած տարեկան համագումարին:
- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Արսեն Հարությունյանը 2024 թվականի նոյեմբերի 28-ին Մոսկվայում մասնակցել է փաստաբանության ոլորտում ԱՊՀ անդամ երկրների հիմնարար կազմակերպության առաջին հանդիպմանը: Կազմակերպությունը միավորել է ԱՊՀ մի շարք երկրների՝ Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության և Ուզբեկստանի Հանրապետության իրավաբանների մասնագիտական համայնքների ներկայացուցիչների՝ մասնագիտական կապերի ամրապնդման նպատակով: Հանդիպմանը քննարկվել են նաև փաստաբանության ինստիտուտների համագործակցությանն առնչվող հարցեր, հաստատվել է բազային կազմակերպության աշխատանքային ծրագիրը, բազային կազմակերպությունում ստեղծվել է Հանրային խորհուրդ և հաստատվել դրա վերաբերյալ կանոնակարգը:
- Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը և փաստաբան Մարտուն Փանոսյանը՝ Փարիզի փաստաբանների միության նախագահ Պիեր Հոֆմանի հրավերով 2024 թվականի նոյեմբերի 28-ին և 29-ին ներկա են գտնվել Փարիզի փաստաբանների միության ամենամյա ամփոփիչ միջոցառմանը: Միջոցառմանը մասնակցել են փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ մի քանի տասնյակ պետություններից: Միջազգային գործընկերները Փարիզում մասնակցել են նաև միմյանց միջև համագործակցությունները խթանելուն միտված և փաստաբանությանն առնչվող տարբեր քննարկումների:
- 2024 թվականի դեկտեմբերի 9-10-ին ՀՀ Ազգային ժողովում անցկացվել է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովի նիստը, որի ընթացքում, ի թիվս այլնի, քննարկվել է նաև «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» կոնվենցիայի նախագիծը: Ելույթով հանդես է եկել նաև ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչ Առնոլդ Վարդանյանը:
- 2024 թվականին ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները մասնակցել են նաև հետևյալ միջոցառումներին՝

1. ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հրավերով՝ օրենսդրական դաշտի վերաբերյալ Ազգային խորհրդատվության և վավերացման աշխատաժողովին,
2. Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հրավերով՝ «Հայաստանում

տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում» ծրագրի 2-րդ նիստին, «Երեխաների մասնակցությունը իրենց առողջության վերաբերյալ որոշումներին» աշխատաժողովին,

3. Եվրոպայի խորհրդի «Երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ծրագրի Ղեկավար կոմիտեի երկրորդ նիստին:

4. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի հրավերով՝ «Երեխաների առցանց միջավայրում հանցագործություններից պաշտպանելուն ուղղված քաղաքականություն. Բացեր, առաջարկներ, հետագա քայլեր» քննարկմանը,

5. Փաստաբանների միջազգային միության (UIA) հրավերով՝ Ամենամյա կոնգրեսին,

6. Եվրասիական տնտեսական ֆորումին,

7. «Հայ երեխաների իրավունքների պաշտպանությունը հետկոնֆլիկտային համատեքստում» ԵՄ ծրագրի շրջանակներում կլոր սեղան-քննարկմանը: 8. «ATHENA – Մարդու իրավուքնների պաշտպանության խթանում և ազգային հաստատությունների հզորացում» ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառմանը,

9. Եվրոպայի խորհրդի խորհրդատուների հետ հանդիպմանը,

10. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հրավերով «Միասին ընդդեմ մարդկանց թրաֆիքինգի» ծրագրի եզրափակիչ միջոցառմանը,

11. ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակից (UNHCR) հրավերով՝ փախստականների համաշխարհային օրվան նվիրված միջոցառմանը,

12. ՀՀ ԱՆ հրավերով Հայ-վրացական իրավական համագործակցության 5-րդ ֆորումի շրջանակներում «Իրավաբանների դերը արդարադատության համակարգում» կայացած նիստին,

13. ԵՄ «Հայաստանում տեղահանված բնակչության համար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ուժեղացում» ծրագրի շրջանակներում կազմակերպված միջոցառմանը,

14. CCBE կազմակերպության PECO կոմիտեի նիստերին:

- ՓՊ երիտասարդական խորհրդի միջազգային համագործակցության շրջանակներում, Պալատի ներկայացուցիչները մասնակցել են ԱՊՀ երկրների փաստաբանական միությունների երիտասարդական կառույցների առաջին առցանց նիստին, որի ընթացքում ներկայացվել են Հայաստանի փորձն ու կարգավիճակը, նաև քննարկվել է այս տարի առաջին առերես հանդիպում-նիստ անցկացնելու հարցը, և նախնական համաձայնություն է ձեռք բերվել այն Հայաստանում անցկացնելու վերաբերյալ:
- 2025 թվականի փետրվարի 13-ին Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի խորհրդի անդամ Արսեն Հարությունյանը մասնակցել է Ռուսաստանի Դաշնության Եկատերինբուրգ քաղաքում կազմակերպված «Կովալևյան ընթերցումներ» միջազգային գիտագործնական կոնֆերանսին: Արսեն Հարությունյանը նաև հանդես է եկել զեկույցով:

- ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը և Պալատի նախագահի միջազգային հարաբերությունների և ԵՄ համագործակցության գծով խորհրդական Մարտուն Փանոսյանը 2025թ. փետրվարի 26-ից հինգ աշխատանքային օրով գտնվել են Ավստրիայում, մասնակցել Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) PECO կոմիտեի նիստին, որտեղ Հայաստանի փաստաբանների պալատը հանդես էր գալիս որպես զեկուցող՝ Հայաստանում հարկային փոփոխությունների արդյունքում փաստաբանական ծառայությունների հարկերի բարձրացման, անվճար իրավաբանական օգնության հարկման և այլ խնդիրների շուրջ:
- Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկա է գտնվել Եվրոպայի Փաստաբանների պալատների նախագահների 53-րդ կոնֆերանսին, որի շրջանակներում հանդիպումներ և քննարկումներ է ունեցել մի շարք երկրների Փաստաբանների պալատների և Փաստաբանական միությունների նախագահների հետ: Աշխատանքային այցի շրջանակներում Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել նաև CCBE -ի ղեկավար Թիերի Վիքերսի և Ավստրիայի փաստաբանների պալատի նախագահ Արմենակ Ութուջյանի հետ:
- 2025 թվականի հունիսի 16-ին Պալատի ներկայացուցիչները մասնակցել են Եվրոպայի խորհրդի կազմակերպած «Փաստաբանների պաշտպանություն, արդարադատության հասանելիության պահպանում խորագրով բարձր մակարդակի համաժողովին, որը նվիրված էր փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին Կոնվենցիայի ընդունմանը և ստորագրման համար բացմանը:

❖ ***Պալատ են այցելել օտարերկրյա պետությունների փաստաբանական համայնքների ներկայացուցիչներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, դատավորներ, դեսպաններ.***

Մասնավորապես՝

- ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի ղեկավարը,
- Միջազգային Պաշտպանության Կենտրոն (CPI) միջազգային իրավապաշտպան կազմակերպության պատվիրակությանը, որը գլխավորում էր Կենտրոնի տնօրեն Կարիննա Մոսկալենկոն,
- Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության ծրագրի տնօրեն Ալեքսիս Հաֆթվանին և Հայաստանում ԱՄՆ դեսպանատան քրեական արդարադատության բարեփոխումների ծրագրերի ղեկավար Քրիստինա Աֆոյանը,

- Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարության մարդու իրավունքների և օրենքի գերակայության գլխավոր տնօրինության համագործակցության ծրագրերի բաժնի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վարչության պատվիրակությունը,
- Ռուսաստանի Դաշնության տարբեր շրջաններում գործունեություն ծավալող մի շարք փաստաբաններ, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան» խորագրով վերապատրաստման շրջանակում, այցելել են ՀՀ փաստաբանների պալատ,
- 2022 թվականի փետրվարի 14-ին Պալատը հյուրընկալել է Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդման ծրագրի «Էքսպերտիզ Ֆրանս» Ֆրանսիայի միջազգային փորձագիտության գործակալության ներկայացուցիչներին,
- 2022 թվականի մայիսի 2-ին Պալատը հյուրընկալել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորներ Թիմ Էյքին, Մատտիաս Գույոմարին և Արմեն Հարությունյանին,
- 2022 թվականի հոկտեմբերի 24-ին Պալատը հյուրընկալել է Ռուսաստանի Դաշնության Իրկուտսկի մարզի Փաստաբանների պալատի պատվիրակությանը,
- 2022 թվականի հոկտեմբերի 27-ին Սիմոն Բաբայանը ընդունել է Ֆրանսիայի Մոնպելիեի փաստաբանների միության նախագահ Նիկոլա Բեդել դը Բուզարենգեսի գլխավորած պատվիրակությանը: Մոնպելիեի փաստաբանների միության նախագահը ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հանձնեց «ԺԱՆ-ԿԼՈԴ ԲԱՐՐԱԼ» մրցանակը՝ որպես մեծ գնահատանք մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում՝ մասնավորապես հայ ռազմագերիների և պատերազմական հանցագործություններից տուժածների վերաբերյալ խնդիրներին ուղղված ՀՀ փաստաբանների պալատի ջանքերի,
- 2023 թվականի մարտի 2-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ընդունել է ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Գալագերին:
- 2023 թվականի մարտի 13-ին ՀՀ Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն ընդունել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID ՄԶԳ) Հայաստանի «Արդարադատության ոլորտի աջակցության ծրագրի» պատվիրակությանը՝ ծրագրի ղեկավար Մարկ Լասսմանի գլխավորությամբ,
- 2023 թվականի ապրիլի 12-ին Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հուրընկալել է Մոնպելիեի փաստաբանների միության Մարդու իրավուքների ինստիտուտի պատվիրակությանը, որը գլխավորում էր ինստիտուտի նախագահ Ամին Ֆարաժը,
- 2023 թվականի ապրիլի 21-ին «Հայաստանի դատավորների կարողությունների զարգացում՝ դատական համակարգի նկատմամբ նոր

ակնկալիքներին համապատասխանելու և հանրային վստահությունն ամրապնդելու նպատակով» երկարամյա ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ են այցելել Շվեդիայի ազգային դատարանների ադմինիստրացիայի ներկայացուցիչներ՝ ծրագրի ղեկավար Լյուդվիգ Բեքինգը, ծրագրի համակարգող Բյորն Լինդենը, ծրագրի երևանյան ներկայացուցիչներ Լիանա Ղազինյանը և Մարիամ Այվազյանը,

- Նույն ժամանակահատվածում ՀՀ փաստաբանների պալատ է այցելել Փարիզի և Օ դը Սենի փաստաբանների միությունների պատվիրակությունը,
- 2023 թվականի հունիսի 13-ին ՀՀ փաստաբանների պալատ է այցելել Իտալիայի Տուշիայի համալսարանի ԵՄ իրավունքի պրոֆեսոր, Լուվենի կաթոլիկ համալսարանի գիտաշխատող, իրավաբանական գիտությունների թեկնածու, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի օգնական Ֆրանչեսկո Լուիջի Գատտան,
- 2024 թվականի ապրիլի 12-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հյուրընկալել է ԱՄՆ դատավոր Թոդ Էդինսին,
- 2024 թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանն ընդունել է Եվրոպական Միության TAIEX դիտարկման առաքելության պատվիրակությանը,
- 2024 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ
- Սիմոն Բաբայանը հյուրընկալել է Բրյուսելում ֆրանսիական պալատի պատվիրակության նախագահ, Եվրոպայի փաստաբանների և իրավաբանների միությունների խորհրդի (CCBE) ներկայացուցիչ Լորան Փեթթիթին: Հանդիպման ընթացքում քննարկվել են «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին» կոնվենցիայի նախագծի մի շարք դրույթներ և փաստաբանության ոլորտին առնչվող այլ հարցեր,
- 2024 թվականի դեկտեմբերի 17-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը հանդիպում է ունեցել Հայաստանում Եվրոպական միության դեսպան Վասիլիս Մարագոսի հետ: Քննարկվել են փաստաբանության ինստիտուտի համար արդի մարտահրավերներն ու մի շարք խնդիրներ,
- 2025 թվականին «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիա. կարիքը և ակնկալիքները» թեմայով համաժողովի մասնակից պետությունների՝ Ֆրանսիայի, Բուլղարիայի, Լիբանանի և Վրաստանի փաստաբանների պալատների և միությունների ներկայացուցիչներն այցելել են ՀՀ փաստաբանների պալատ, ՀՀ փաստաբանական ակադեմիա և Հանրային պաշտպանի գրասենյակ,
- 2025 թվականի ապրիլի 7-ին ՀՀ փաստաբանների պալատ է այցելել Ֆրանսիայի Մոնպելիե քաղաքի փաստաբանների միության պատվիրակությունը՝ միության նախագահ Պիեր Լաֆոնթի գլխավորությամբ,
- 2025 թվականին ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն

Բաբայանը հյուրընկալել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեին, գրասենյակի ղեկավարի տեղակալ Վեդրան Յան-Քյելդսենին և ԵԽ գրասենյակի Աջակցություն դատահիրավական բարեփոխումների իրականացմանը Հայաստանում ծրագրի ղեկավար Արման Զրվանդյանը,

- 2025 թվականի ապրիլի 23-ին Պալատի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիայի կիրառման հնարավոր արդյունքները» թեմայով պանելային քննարկում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը, Ֆրանսիայի փաստաբանների պալատների ազգային խորհրդի նախագահ Ժուլի Կուտուղիեղը, Բուլղարիայի Փաստաբանների բարձրագույն խորհրդի նախագահ Իվայլո Դերմենջիևը , Բեյրութի փաստաբանների միության նախագահ Ֆադի Մասրին, Օ դե Սենի փաստաբանների պալատի նախագահ Մարի Պասկալ Պիոն,
- 2025 թվականի ապրիլի 23-ին Պալատի նախաձեռնությամբ տեղի է ունեցել «Փաստաբանների իրավունքների պաշտպանության արդի հիմնախնդիրները» թեմայով պանելային քննարկում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալ Հարութ Ակլունցը, ՀՀ Փաստաբանների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի անդամ Արմինե Ֆանյանը, Ֆրանսիայի փաստաբանների միությունների ազգային խորհրդի մասնագիտական գաղտնիության աշխատանքային խմբի ղեկավար Վենսան Նիողեն, Օ դե Սենի փաստաբանների միության նախկին նախագահ Վենսան Մողեն, Մոնպելիեի փաստաբանների միության նախկին նախագահ Լյուք Քիրքյաչարյանը, Վրաստանի փաստաբանների միության իրավաբանների իրավունքների պաշտպանության կոմիտեի նախագահ Օնիս Մարգիանին:

❖ ***Կնքվել են համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր:***

- Հայաստանում ՄԱԿ-ի Փախստականների գործակալության (ՄԱԿ ՓԳՀ) ղեկավար Աննա-Կարին Օստը բազմամյա համագործակցության համաձայնագիր են ստորագրել՝ սկիզբ դնելով մի նախագծի, որի նպատակն է ՄԱԿ ՓԳՀ-ի մասնագիտական և տեխնիկական աջակցության միջոցով բարելավել

ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրվող անվճար իրավաբանական օգնության հասանելիությունը և որակը:

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը համագործակցության համաձայնագրեր է կնքել Ռուսաստանի Դաշնության փաստաբանների դաշնային պալատի հետ:
- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը համագործակցության համաձայնագրեր է կնքել Ֆրանսիայի Օ դը Սենի փաստաբանների միության հետ:
- ՀՀ փաստաբանների պալատի և Բեյրութի փաստաբանների միության միջև կնքվել է համագործակցության հուշագիր:
- ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ հաշտարարների պալատի միջև կնքվել է համագործակցության հուշագիր:

Բացի այդ՝

- ՀՀ փաստաբանների պալատն անդամակցել է ԱՊՀ մասնակից պետությունների բազային կազմակերպությանը կից Հանրային խորհրդին:
- 2022 թվականի ապրիլի 28-ին ՀՀ փաստաբանների պալատի նախաձեռնությամբ Երևանում կայացել է **«Փաստաբանությունն ինտեգրացիոն գործընթացների համատեքստում. հեռանկարներ և մարտահրավերներ» խորագրով միջազգային համաժողով**: Որին մասնակցել են գործընկերներ Հայաստանից, Ֆրանսիայից, Ռուսաստանից, Վրաստանից և Ղազախստանից:

Քննարկվել են փաստաբանության՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ինստիտուտի զարգացման միտումները, անդրսահմանային համագործակցության հնարավորությունները և առաջացող մարտահրավերներն ինտեգրացիոն գործընթացներում:

- Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում տեղի է ունեցել քննարկում **«Փաստաբանների իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդման հիմնախնդիրները ժամանակակից մարտահրավերների պայմաններում»** թեմայով: Հայ և ֆրանսիացի փաստաբանները քննարկել են փաստաբանների իրավունքների պաշտպանության և իրավունքի գերակայության ամրապնդման հիմնախնդիրները:
- Պալատի և Հայաստանում ՄԱԿ ՓԳՀ-ի ներկայացուցչության միջև 2024 թվականին կնքված համագործակցության համաձայնագրի հիման վրա նույն թվականի մարտ ամսից սկսվել է ՄԱԿ ՓԳՀ մտահոգության ներքո գտնվող անձանց, մասնավորապես՝ ապաստան հայցողներին և փախստականներին, ներառյալ՝ արցախցիներին, որակյալ և անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու նոր ծրագիր:

Հանրային պաշտպանի գրասենյակից զատ, Ծրագրի շրջանակներում, Պալատը տվյալ ոլորտում մասնագիտացած փաստաբանների միջոցով ևս իրավաբանական օգնություն է տրամադրել ապաստան հայցողներին և

փախստականներին: Բացի այդ, ծրագրի շրջանակներում Պալատում 2024 թվականի մարտ ամսից շարունակել է գործել նաև ապաստանի հարցերով խորհրդատու-փորձագետի հաստիքը, ով համակարգել է ծրագրի փաստաբանների կողմից իրավաբանական օգնության տրամադրումն ապաստան հայցողներին և փախստականներին և աջակցել է հանրային պաշտպաններին նշված թիրախային անձանց իրավաբանական օգնություն տրամադրելիս: Դեռևս 2023 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ի հետ համագործակցությամբ իրականացված ծրագրի շրջանակներում պատրաստվել էին տեղեկատվական պաստառներ, ստենդներ և երեք տեսակի լիֆլեթներ, որոնք թարգմանվել էին ապաստան հայցողների կողմից առավել շատ օգտագործվող 8 լեզուներով: Արդեն 2024 թվականի ընթացքում դրանք տեղադրվել ու մշտապես հասանելի են եղել Հանրային պաշտպանի գրասենյակում: Դրանք տեղեկատվություն են պարունակում ապաստանի տրամադրման ընթացակարգում անվճար իրավաբանական օգնության մատուցման, հարցազրույցի փուլի և քրեական վարույթներով և հանձնման ընթացակարգերում ապաստան հայցողներին անվճար իրավաբանական օգնության տրամադրման մասին: 2024 թվականի ընթացքում դրանց առաջին խմբաքանակը տրամադրվել է Քրեակատարողական ծառայությանը, որն ապահովելու էր դրանց հասանելիությունը համապատասխան քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված օտարերկրացիներին: Մեկ այլ խմբաքանակ էլ տրամադրվել է Միգրացիայի և քաղաքացիության ծառայությանը, որը տեղադրվել է ապաստան հայցողների սպասասրահում:

Ծրագրի շրջանակներում ապահովվել է նաև փախստականներին ու ապաստան հայցողներին իրավաբանական օգնության տրամադրման ընթացքում թարգմանչական ծառայությունների մատուցումը: 2024 թվականի ընթացքում Հայկական կարմիր խաչի ընկերության միջոցով թարգմանչի բանավոր ծառայության համար ընկերությանը խնդրագրեր են ներկայացվել 298 անգամ (ընդհանուր 120 ժամ 47 րոպե), որից արաբերենի համար՝ 167 անգամ, պարսկերենի համար՝ 84, քրդերենի համար՝ 19, անգլերենի համար՝ 11, ֆրանսերենի համար՝ 6, ռուսերենի համար՝ 6, թուրքերենի համար՝ 3 և սորանի համար՝ 2 անգամ: 2024 թվականի ընթացքում Ծրագրի փաստաբանների և հանրային պաշտպանների կողմից ապաստան հայցողների գործով կազմված հայցադիմումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների հետ կապված վերջիններս խորհրդակցել են խորհրդատու-փորձագետի և Ծրագրի իրավաբանի հետ ծագման երկրի մասին տեղեկություններ հայթայթելու անհրաժեշտության մասին, ինչի արդյունքում բազմաթիվ գործերով Ծրագրի փաստաբաններին խորհրդատու-փորձագետի, ինչպես նաև Ծրագրի իրավաբանի կողմից տրամադրվել են ծագման երկրի մասին տեղեկություններ: Հարկ է ընդգծել, որ փորձագիտական աջակցություն է տրամադրվել նաև ապաստան հայցողների գործերով զբաղվող մասնավոր գործունեություն իրականացնող փաստաբաններին:

Ծրագրի շրջանակներում 2024 թվականի ընթացքում կազմակերպվել է

նաևթվով 4 աշխատաժողով, մասնավորապես՝ 2024 թվականի հունիսի 29-ից 30-ը կազմակերպվել է «Իրավաբանական օգնության տրամադրումը ապաստան հայցողներին» թեմայով աշխատաժողով: Աշխատաժողովին մասնակցել են Ծրագրի իրավաբանական թիմի անդամները, ինչպես նաև քաղաքացիաիրավական մասնագիտացմամբ հանրային պաշտպանները:

2024 թվականի հոկտեմբերի 19-20-ը կազմակերպվել է աշխատաժողով հանրային պաշտպանների և Ծրագրի փաստաբանների համար «ՄԻԵԴ չափանիշները և ընթացակարգերն ապաստանի վարույթում» թեմայով: 2024 թվականի նոյեմբերի 16-17-ը և 2024 թվականի դեկտեմբերի 14-15-ը երկու աշխատաժողով է կազմակերպվել «Ապաստանը և քրեական վարույթը» թեմայով:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագրի շրջանակներում 2024 թվականին իրականացվել է «Հայաստանում փախստականների ճգնաժամը. Դիմակայունություն բոլորի համար» ծրագիրը: Ծրագրի նպատակն է եղել բարելավել իրավական օգնության ծառայությունների արդյունավետությունը՝ Փաստաբանների պալատի, Հանրային պաշտպանի գրասենյակի կարողությունները զարգացնելու և հասարակության իրազեկվածությունն ընդլայնելու միջոցով: Ծրագրի շրջանակներում փաստաբանների վերապատրաստման և կարողությունների զարգացման նպատակով կազմակերպվել են երեք արտագնա սեմինարներ՝ Սյունիքի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար, Շիրակի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար, ինչպես նաև Տավուշի մարզի և հարակից բնակավայրերի փաստաբանների համար: Բոլոր երեք մարզերում կազմակերպված սեմինարներին մասնակցության առաջնահերթություն է տրվել Արցախից տեղահանված փաստաբաններին: Հասարակության իրավագիտակցությունը և իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով Ծրագրի շրջանակներում պատրաստվել են տեսանյութեր Հարկային փոփոխությունների արդյունքում անվճար իրավաբանական օգնության հարկման41, Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ, ինչպես նաև մի շարք այլ վերաբերելի թեմաներով: Հասարակության իրազեկվածությունը անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ բարձրացնելու նպատակով պատրաստվել են թվով 1000 տեղեկատվական պաստառներ՝ անվճար իրավաբանական օգնություն ստանալու կարգի, դրա շահառուների, գրասենյակի գործունեության և տեղակայման վայրերի մասին: Պաստառները փոխանցվել են մարզպետարաններին, որպեսզի փակցվեն համայնքապետարանների տեղեկատվական տախտակների վրա: Հաշվի առնելով Հանրային պաշտպանի գրասենյակի մարզային նստավայրերի կարիքները, և դրանց բավարարման առաջնահերթությունը որոշում է կայացվել իրականացնել Հանրային պաշտպանի գրասենյակի Գորիս քաղաքի նստավայրի վերանորոգում: Հին գույքը փոխարինվել է նորով, գնվել է նոր տեխնիկական սարք: Գնվել և շահագործման են հանձնվել ՀՀ փաստաբանների պալատի հանրային

հաղորդակցման կարողությունները բարելավող սարքավորումներ:

2025 թվականի ապրիլի 23-ին Փաստաբանների պալատի նախաձեռնությամբ տեղի է ունեցել միջազգային համաժողով **«Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիա. Կարիքը և ակնկալիքները» թեմայով**: Համաժողովին մասնակցել են Ֆրանսիայի, Բուլղարիայի, Լիբանանի և Վրաստանի փաստաբանների պալատների և միությունների ներկայացուցիչները:

Համաժողովի շրջանակներում տեղի են ունեցել պանելային քննարկումներ «Փաստաբանի մասնագիտության պաշտպանության մասին կոնվենցիայի կիրառման հնարավոր արդյունքները» և «Փաստաբանների իրավունքների պաշտպանության արդի հիմնախնդիրները» թեմաներով:

- ՀՀ փաստաբանների պալատի Երիտասարդական խորհուրդը ևս ձեռնարկել է միջոցներ նպաստելու համար միջհամայնքային կապերի զարգացմանը: Հաստատված արդյունավետ կապերի շնորհիվ Երիտասարդական խորհուրդը հրավերներ է ստացել մի շարք միջոցառումներին փաստաբանների մասնակցության վերաբերյալ: Հրավերները եղել են Եվրոպայի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի, Միջազգային առևտրային պալատի Հայաստանյան ազգային կոմիտեի և «Արբիտրաժ» ՍՊԸ-ին կից մշտապես գործող Արբիտրաժային դատարանի կողմից կազմակերպված միջոցառումներին մասնակցելու վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում Պալատը շարունակել է համագործակցությունը Եվրոպական միության և Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ, համատեղ անցկացնելով թվով 15 վերապատրաստման դասընթացներ:

XVII. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ






Փաստաբանների պալատի նախագահի իրավական ակտերը
500
450
400
350
300
250
200
150
100
50
0
401
407
464
234
358
362
427
203
Փաստաբանների պալատի նախագահի որոշումների ընդհանուր թիվը
Փաստաբանների պալատի նախագահի հրամանների ընդհանուր թիվը
2022 թ.
2023 թ.
2024 թ.
2025 թ. հուլիսի 31-ը ներառյալ


Գործավարությունը
3500
3000
2500
2000
1500
1000
500
0
3214
3323
3270
3314
1966
2338
1945
2149
2253
1073
Մուտքագրված փաստաթղթերի քանակը
Ելքագրված փաստաթղթերի քանակ
2021 թ.
2022 թ.
2023 թ.
2024 թ.
2025 թ. հուլիսի 31-ը ներառյալ


Որակավորման քննությունները
1000
900
800
700
600
500
400
300
200
100
0
883
699
Որակավորման քննություններին մասնակցած հավակնորդների քանակ
Որակավորման քննությունները հաղթահարած հավակնորդների քանակ


ՀՊԳ վարած գործերը
30000
25000
20000
15000
10000
5000
0
10492
11117
15518
23910
15597
8800
6947
6033
7920
4518
Քրեական գործերի քանակ
Քաղաքացիական գործերի քանակ
2021 թ.
2022 թ.
2023 թ.
2024 թ.
2025 թ. առաջին կիսամյակ